

1379

Ս. ԲՈՒՆՍ

Ս. ԿԱԳՐՈՒԹԵԱՆ



Ի ՊԷՏՍ

ՆՈՐԱՂԱՐԺԻՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ





Կ. ՊՕԼԻՍ


Տպագրութիւն Կ. Յ. Մարգարեան

— 1881 —


267







ՅԱՌԱՋԱԲԱՆ



Եթէ աշխարհիս մէջ ամեն բան մե-
զի իր բնական կերպովը երևնար ,
ընկերական կենաց մէջ պակասաւոր
չգտնուելու համար մեզի պէտք եղած
բաներն՝ աւելի յօժարութեամբ և
մտադրութեամբ կը սորվէինք : Մար-
դիկ ալ ընդհանրապէս ան նրբամտու-
թիւնը չունին որ տեսած բաներնուն
արտաքին երևոյթէն շխաբուելով՝ տ-
նոնց մինչև ներսը թափանցեն ու ինչ
ըլլալը հասկնան : Ուստի շատ անգամ
կը վախնանք կամ մեզ կը վախցնեն
անանկ ոչինչ օբաներէ որոնք իրօք
ստուեր են , ու քիչ մը որ անոնց
վրայ մտածելու ըլլանք՝ անոնց մէջ
տեսնուած դժուարութեան լուծումը
կը դտնենք :

Նամակ գրելու մէջ ալ ասանկ է :
 Իսկրութիւն կամ գրաւորական կրթ-
 ութութիւն չունեցողները , կամ անոնք
 որ աշխարհիս գործերուն մէջ մտած
 չլլալով՝ իրենց բնական խակութեա-
 նը մէջ մնացած են , առհասարակ
 նամակ գրելը մեծ արուեստ կը հա-
 մարին : Բայց դարմանալին ան է որ
 ուսման մէջ տարիներ անցունողներն
 ալ շատ անգամ տոմսակ մը գրելու
 համար կը շուարին , և շէն գիտեր
 թէ հասարակ նամակի մը նիւթն ինչ-
 պէս շարագրեն :

Աս դժուարութեան գլխաւոր սլատ-
 ճառն սա է որ նամակագրութեան
 ոճը հասարակ խօսակցութեան ոճէն
 տարբեր և օտար կարծուած է : Աչ
 որ կը մտածէ թէ նամակի մէջ գր-
 ւածը հասարակ խօսակցութեան մէջ
 ըսածներէն տարբեր չէ . ան անձը ո-
 րուն նամակ կը գրենք՝ հեռու ըլլալուն

Համար նամակով կը հաղորդենք անոր
 ան բաները՝ որոնք բերնուց պիտի
 ըսէինք, եթէ մօտ ըլլար: Աս մտա-
 ծութիւնը նամակ գրելու վրայէն
 դժուարութեան մեծ մասը կը վեր-
 ցընէ, և քիչ մը աւելի մտադրութե-
 նէ ուրիշ բանի կարօտ չընեն:

Ուստի նամակ գրելու համար կար-
 ծուած դժուարութիւնը վերցնելու
 կամ թեթեւցնելու համար՝ սա երկու
 կանոնին միտ դնելու է: Նախ, նա-
 մակին լեզուն ամեն օրուան խօսած
 խօսքերնուս ոճովը պիտի ըլլայ: Ար-
 դարեւ անոնք որ պարզ ու դիւրին
 ոճը ձգելով՝ հասարակ բան մը մեծ
 մեծ բառերով ու դարձուածներով
 յայտնել կ'օղեն, կը ցուցնեն թէ ի-
 մաստի կողմանէ աղքատ են, ուստի
 և իրենց մտքին ամլութիւնը բառե-
 րով արդիւնաւոր երեցնել ուզող կը
 համարուին, և վերջապէս փորձ մար-

դոց առջին իրենց ինչ ըլլալը կը յայտ-
նեն :


Երկրորդ , նամակին մէջ ան ըսե-
լու է , ինչ որ կըսէինք , եթէ մեզի
մօտ ըլլար ան մարդը որուն կը գը-
րենք : Ահա նամակագրութեան բոլոր
արուեստը , որ վերի երկու կանոնին
կը վերածուի : Արիչ միտ դրուելու
բաներն երկրորդական են : Արդարև
ինչպէս որ ամենէն չնչին բանն ալ
վայելչութեամբ ընելու կամ ըսելու
համար քիչ շատ միտ դնելու բաներ
կան , ասանկ ալ նամակ դրելու մէջ
կան մասնաւոր միտ դրուելու բաներ ,
որոնց կատարումն նամակագրու-
թեան վայելչութիւնը կախում ունի :
Այսպէս են մարդոց այլ և այլ աստի-
ճանին , սլաշտօնին ու վիճակին և ի-
րարու հետ ունեցած յարաբերու-
թեանը՝ նայելով իրարու դրելու ոճը ,
իրարու հետ ունենալու ակնածու-

Թխնը , ընտանութիւնը , որոնք անտարակոյս այլ և այլ են , և որոնք բնական խոհեմութիւնն ալ կրնայ թելադրել :

Աս երկրորդական կանոնները՝ կէս մը նախադիտելեաց մէջ պիտի սորվինք , կէս մ'ալ ամեն տեսակ նամակի համար տրուած օրինակներուն մէջ :

Ասոնք դիւրին և քիչ բաներ ըլլալով ինչպէս անոնք միտք առնելը դիւրին է , ասանկ ալ անոնց անմտադիր ըլլալով անոնց մէջ պակսիլը մեծ ամօթ է :

Յոյս ունինք թէ մեր ուսումնասէր պատանիները թէ նախադիտելեաց կանոններէն և թէ նամակներուն օրինակներէն մեծ օգուտ պիտի քաղեն , եթէ աս կարեօր ճիւղին մէջ գործնական յաջողութիւն մը ստանալ կուզեն , մենք ալ մեր նպատակին հասած ըլլալով ուրախ պիտի ըլլանք :



ՆԱԽԱԳԻՏԵԼ ԻՔ



Նամակի մը գլխաւոր մասերը հետևեալներն են .

1. Նամակներու մէջ գործածուելու յարգական ճեւերը :
2. Նամակի համար գործածուելու բոլորը :
3. Վերնագիրը :
4. Բուն նամակը կամ նամակին մարմինը :
5. Վերջնագիրը :
6. Թուականը :
7. Ստորագրութիւնը :
8. Յետագրութիւնը :
9. Կնիք :
10. Մակագիր կամ հասցեն :

Ասոնց ամենուն վրայ կարգաւ համառօտիւ խօսինք :

1. ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒԵԼՈՒ ՅԱՐԳԱՆ ՉԵՒԵՐԸ

Ինչպէս որ ամեն նամակ մի և նոյն նիւթի վրայ կամ մի և նոյն մարդու

չի գրուիր, առանկ ալ ամեն մէկուն
մէջ գործածելու յարգական ձևերը
մի և նոյն շէն կրնար ըլլալ: Յարգա-
կան ձևեր ըսածնիս՝ ընդհանուր հա-
ւանութեամբ որոշուած քանի մը քա-
ղաքավարական խօսքեր են, որով քիչ
կամ շատ մեր յարգանքը կիմացը-
նենք ան անձին վրայ որուն նամակը
կը գրենք:

Աս ձևերը թէպէտ ըստ ինքեան
չնչին բաներ են, բայց փառասէր-
ներուն հպարտութիւնն ու ունայնու-
թիւնը զանոնք շափէն աւելի մեծ-
ցուց, անանկ որ թէեւ մեզի համար
ոչինչ բաներ ըլլան, ուրիշներուն հա-
մար հարկաւ սորվելու ու գործածե-
լու կ'ստիպուինք: Դարձեալ կրտսենք
որ միտքէ չելլէ՝ ուրիշներուն հետ ա-
ղէկ վարուիլ ուզողը՝ պէտք է որ զի-
մացիներն աւելի պատիւ ընելով՝ քան
թէ քիչ ընելով պահասաւոր գտնուի:

Քիչ մը առելի քողարքովարու թիւնը
մեզի յանցանք չի կրնար համարուիլ ,
բայց քիչ մը պակասը շատ անգամ
մեր դիմացինին միտքը մեր վրայ կը
ծռէ :

Տածութեան իջնալու շափ խոնար-
հիլ պէտք չէ , բայց ուրիշը հաճելու
համար վայելուչ եղածն ալ պէտք է
զգուշութեամբ կատարել :

2. ՆԱՄԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԵԼՈՒ ԹՈՒՂԹԸ

Թուղթը քնդհանրապէս միջակ մե-
ծութեամբ ու ճերմակ ըլլալու է :
Եթէ նամակը առնելու անձը՝ զրկո-
ղէն մեծ ու պատուաւոր է , կէս թեր-
թի վրայ գրելը շատ մեծ անքաղա-
քովարու թիւն է : Բայց եթէ նամակը
զրկողէն սղտիկ կամ անոր հաւասար
և ընտանի բարեկամն է , հոգ չէ :

3. ՎԵՐՆԱԳԻՐ

Վերնագիրը պատուանուն մըն է

որ նամակն առնելու անձին կուտանք :
թէպէտ պատուանուններուն որոշ
ձևեր տալ չըլար , քանզի մարդուն
սատիճանին ու գտնուած վիճակին
պարագաներուն նայելով կը փոխուին ,
բայց մենք հոս խիստ սովորականնե-
րէն քանի մը հատը կը դնենք :

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Վեհաշնորհ Սրբազան Հոգևոր Տէր :

ՊԱՏՐԻԱՐԳԻ

Բարձրաշնորհ և Աստուածարեւալ
Տէր :

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Պերճաշնորհ և բարեփառ Տէր :

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Գերապատիւ և երջանիկ Տէր :

ՎԱՐԴԱՊԵՏԻ

Արժանապատիւ Հայր :

ԱԻԱԳԵՐԻՑՈՒ

Հայրաշնորհ Տէր Հայր :

ԵՐԻՑՈՒ

Բարեկրօն և պատուական Հայր :

Հօր ԵՒ Մօր

Պատուական , Սիրելի ծնողք , կամ
Հայր , Մայր :

ԵՂԲՕՐ ԵՒ ՔՐՈՋ

Աղնիւ , Սիրելի եղբայր կամ քոյր :

ԶԱԻԿԻ

Ցանկալի , Սիրելի որդեակ :

ԵՐԵՒԵԼԻ ԻՇԽԱՆԻ ԿԱՄ ՏԻԿՆՈՋ

Փառաւոր , հոյակապ իշխան կամ
տիկին :

ԱԶՆՈՒԱԿԱՆԻ

Աղնուական Տէր :

ՄԵԾԱՑԱՆ

Մեծապատիւ , Մեծաշուք Տէր :

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

Մեծահամբաւ Տէր :

ԲԱՐԵԿԱՄԻ

Հաւատարիմ , Սիրելի բարեկամ :

Թղթին վերի դիէն մատ մը ձգե-
լով՝ վերնագլիըը սկսելու է . իսկ բուն
նամակը՝ մարդուն մեծութեանը նա-
յելով երկու երեք կամ աւելի տող
վարէն սկսելու է : Դարձեալ թղթին
մինչև վարի տողը դրել վայելուչ չէ .
միայն՝ եթէ ընտանի անձի մը գրուի,
հոգ չէ :

Թղթին առջի երեսը լնցնելն և
դարձնելն ետքը , ետևի երեսն ալ
առջի երեսին պէս լուսանցք թող
տալու է : Երկու տողէ պակաս բան
ետին անցունել չըլլար . և դարձեալ ,
ետևի երեսին վրայ անկէ սկսելու է
դրել , ուր որ առջի երեսին վրայ
սկսուած է . քայք , եթէ նամակն առ-
նելու մարդը հասարակ կամ ընտանի
մէկն է , վերնագլին տողէն սկսելն
ալ հոգ չէ :

4. ԲՈՒՆ ՆՍՄՍԿԸ ԿՍՄ ՆՍՄՍԿԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Բուն նամակին մէջ ածական կամ պատուանուն դործածել հարկ եղած ատեն, ամեն մարդու աստիճանին նայելով, վերնագրին մէջ դործածուածէն քիչ մը թեթեւը դործածելու է. և եթէ նամակը առնելու անձը խիստ երևելի մէկն է, անոր տեղը դրուած դերանուններն ու ածականներն ալ գլխադրով դրուելու են :

Ինչպէս առաջ ըսուեցաւ, դարձեալ կըսենք. դործածուած ոճը՝ նամակը առնող մարդուն վիճակին պէտք է յարմարիլ. ուրախութեան մէջ եղողին՝ արտում կերպով, տրամութեան մէջ եղողին՝ ուրախ կերպով գրելով, կամ մենէ վեր մէկու մը շափէ աւելի ընտանութիւն ցուցնելով՝ չըլայ որ մեր զիմացինը բարկացնենք :

Մենէ մեծ մարդոց նամակին մէջ

բան հարցնել չըլլար . ասիկա ընտա-
նութեան նշան ըլլալուն համար՝ ա-
նանկ մարդոց համար անքաղաքավա-
րութիւն կը համարուի . և եթէ հար-
ցում մը ընել հարկ ըլլայ , խոնարհ
ձևեր գործածելու է . ինչպէս են .
« Ներեցէք տէր իմ որ . . . » կամ
« Չըլլայ որ յանդգնութիւն համա-
րիք . . . » և այլն : Նմանասլէս ասանկ
մեծ մարդոց հետ հրամայական կեր-
պով խօսիլը մեծ կոպտութիւն է :

Եթէ նամակին մէջ աւրուածներ
գանուին , կամ լմնցած տողերուն մէջ
տեղը նոր տող գրել կամ բառ դնել
հարկ ըլլայ , նամակը նորէն գրել օգէտք
է . անանկ աղտոտ կերպով չերթար :

Եթէ մէկու մը հետ ընտանեացը
կամ ծանօթներուն վրայ խօսք ըլլայ ,
անոնց անունները սոսկ տալ չըլլար .
անոնց մէյմէկ վայելուչ պատուանուն
ալ տալու է :

Ընդհանուր կանոն եղած է որ մենե՛
մեծ մարդու շողաչենք որ ուրիշ մե-
կուն բարև ընէ . մանաւանդ եթէ
բարեն առնելու մարդը՝ նամակն առ-
նողէն պղտիկ է . բայց անոր հաւա-
սար ալ ըլլալու ըլլայ , դարձեալ քա-
ղաքաւար կերպով մը ըսուելու է :
Աս բարեները նամակին մէջ տեղը
գրել չլար , այլ վերջը գրելու է .
բայց եթէ բարեն առնելու մարդը
նայն նամակին մէջ յիշուած է , բա-
րևը նամակին մէջ ալ գրուելու ըլլայ
հոգ չէ :

Յ. ՎԵՐՁՆԱԳԻՐ

Նամակին մէջ մեր ամեն ուղածը
գրելէ ետքը՝ վերջը « Ողջ եղիք » մը
կաւեցնենք : Ետքը անոր տակը ,
թղթին աջ կողմը , ամեն մարդու իր
աստիճանին նայելով՝ անկեղծութեան
կամ յարգանաց խօսք մը ըսելու է .

զոր օրինակ՝ եթէ ազնուական մարդ
մըն է, այսպէս. Ողջ եղիք.

Չեր ազնուականութեանը
Նուստի ծառայ

* * *

Ե. ԹՈՒՍԿԱՆ

Եթէ նամակն առնողը՝ նամակը
զրոյէն մեծ է, թուականը վերջնագ-
րին դիմացը լուսանցքին մօտ դրուե-
լու է. և նախ ան քաղաքին անունը,
ետքը ամսոյն օրը, ետքը տարւոյն
թիւը, զոր օրինակ.

Կոստանդնուպօլիս, 20 Մարտ 1881:

Նամակն առնողը՝ նամակը գրողին
հաւատար մէկն ալ ըլլայ, թուականն
աս կերպով գրելը լուսագոյն է. բայց
եթէ անկէ սլզտիկ է՝ անմիջապէս
վերնագրին տակը, դէպ 'ի ձախ կող-
մը կրնանք գրել:

Գանք սոմնակներու: Եթէ տամ-

սակը նոյն օրը տիրոջը պիտի հասնի,
սոսկ օրուան անունը և ժամը նշա-
նակելն ալ բաւական է :

7. ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ստորագրութիւնը, թուականին
դիմացը և անկէ քիչ մը վար, թղթին
աջ դին կը դրուի : Ստորագրութեան
մէջ չորս բան կը մտնէ . նախ՝ ինչ-
պէս վերն ըսինք, նամակն առնողին
ստորագրութեան և պատուոյն նայելով՝
ստորագրութեան սկիզբը խոնարհա-
կան բառ մը դնելու է . երրորդ՝
նամակը գրողին անունը . երրորդ՝
մականունը . չորրորդ ալ գրողին վի-
ճակին կամ պաշտօնին անունը :

Մեծ մարդոց գրելու ատեն՝ ստո-
րագրութիւնը շատ վար նամակին
տակը կը դրուի : Նամակներու մէջ
զխաւորապէս նայելու է որ ստորագ-
րութիւնն ու թուականը չը մտցուի :

ասլա թէ ոչ մեծ ամօթ է, և անկէ
երբեմն գրողին ալ մնաս կը հասնի

8. ՅԵՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Շատ անգամ կը պատահի որ նա-
մակը գրելէն ետքը՝ նոր բան մը կըր-
նանք յիշել, կամ իմացնելու արժանի
լուր մը կը լսենք, ան տալեն թուա-
կանին և ստորագրութեան վերջի
տողէն քանի մը տող վար, թուղթին
ձախ դին Յ. և Գ. տառերը դնելով
(որ յետոյ գրուած ըսել է) դիպուա-
ծը գրելու կ'սկսինք: Բայց որովհետեւ
ասիկա շատ անգամ անմտադրութենէ
յառաջ կուգայ, սնոր համար աս
բանը միայն մտերիմներու հետ կըլ-
լայ, ան ալ երբ անոնց բերնով մի-
կու մը բարե կը զրկենք. նմանասլ, ս
զգուշանալու է որ լուսանցքի մէջ ալ
բան չգրուի:

9. ԿՆԻՔ


Թուղթը քիչ մը երկայն քառակուսի

ու վայելուչ մեծութեամբ ծալլելէն
եաքը կնքել պէտք է : Եթէ մեծ մար-
դու երթալու նամակ է , սպանիա-
կան մոմով կնքելու է , թէ չէ , հասա-
րակ գործածուածը՝ նշխարն է : Եթէ
նամակն առնելու մարդը սուգի մէջ
է , նշխարքը սև ըլլայ աւելի աղէկ է :


10. ՄԱԿԱԳԻՐ

Նամակին մակագիրը կամ հասցէն,
ծալլուած թղթին վրայ կը գրուի, որ
ոչ շատ վարէն ոչ ալ շատ վերէն ըլ-
լալու է : Նախ մարդուն աստիճանին
վայլած պատուանուն մը դնելու է .
եաքը անունը , մականունը , ետքն
պաշտօնին անունը : Անկէ քիչ մը վար
աջ դին՝ մարդուն եղած քաղքին ա-
նունը կը դրուի . և նոյն տողին ձախ
դին՝ եղած թաղը , բայց քաղքին ա-
նունը թաղին անունէն վար պիտի
ըլլայ :






ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄՍԿՆԵՐ



1. ՄԵԿՈՒՆ ԱՆՈՒՆԸ ԿԱՄ ԾՆՆՌԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՇՆՈՐՀԱ- ԻՈՐԵԼՈՒ ՀՍՄԱՐ



ԳԻՏԵԼԻՔ



Մեր գրած նամակներուն մէջ զըլ-
խաւորապէս երկու բան նայելու ենք,
մէյի՛ք՝ դիրն ընդունող անձին ով և
ինչ ըլլալը, մէյ մ'ալ անոր նայելով
մեր ով ըլլալը. սա երկու բանն ա-
ղէկ կըսելու ենք որ նամակին լեզուն
յարմար և պատշաճ ըլլայ:

Բարեկամներու ու հաւատարմներու
մէջ անուան ու նոր տարւոյ համար
իրարու գրուած շնորհաւորութեան

նամակները՝ պէտք է որ զուարճալի,
ու գրեթէ զբօսանաց համար գրուած
ըլլան . և գլխաւորապէս նուրբ ու
փափուկ իմաստներով գրուած ըլլա-
լու են :

Եթէ նամակը գրողը ոտանաւոր
գրելու կարողութիւն ունի, աս կերպ
նամակներու մէջ մանր երգ կամ նը-
ւագ մը կրնայ շինել ու դնել : Բայց
որովհետեւ բարեկամութեան ազնիւ
զգացումները մարդուս բոլոր հան-
ճարէն վեր կը համարուին, անոր հա-
մար անանկ զուարճական բաները
նամակին վերջը ձգելու է :

Մեր մեծին կամ մենէ վեր մար-
դոց գրուած նամակին մէջ աւելի
յարգանք ցուցնելու է . ինչու որ
ան ատեն նամակը զուարճականու-
թենէ կելլէ, առաւել պարտքի մը
տակ կը մտնէ :



Յ. ՆԱՄԱԿ

Տղայ մը իր հօրը

Յարգոյ և սիրելի Հայրս .

Այսօր ձեր անուան օրն ըլլալով
կարծես թէ ձեր քովն եկած եմ, և
չեմ գիտեր ալ ինչպէս բացատրեմ,
ձենէ զատուած ըլլալուս ցաւն այսօր
աւելի սաստիկ կ'ըզամ, Ներեցէք
ինծի, Հայր, որ դոնէ մտքով քիչ մը
ձեր քով գամ, ու ձեզի պարտական
եղած յարգանքս ցուցնեմ, ձեզի
երջանիկ և երկար օրեր մտնիմ եմ, ու
հայրական համբուրի մը և օրհնու-
թեան արժանանամ: Ահա իմ բազ-
մանքներս ասցնք են, որոնց ձեզի
հաճելի ըլլալը դիտնալուս համար,
գրելովս ձեր քովը չգտնուելուս ցաւը
քիչ մը կը թեթեւայ:


Սիրելի մօրս ձեռուրները կը համ-

բուրեմ, ու կաղաչեմ որ իր որդւոյն
յարգանքը սիրով ընդունի :

Ողջ եղիք :

Ձեր հնազանդ որդին

* * *



Բ. ՆԱՄԱԿ

Պաշտպանի

Տէր .

Առ ձեզ ունեցած յարգանքս ու
երախտադիտութիւնս ցուցնող ա-
ռիթներն ձեռքէ չխախցնելու միշտ
կը ջանամ . աւասիկ սա ձեր անուան
բարեբախտ օրը՝ երախտադիտու-
թիւնս ու յարգանքս ձեզի ցուցը-
նելն ինծի սխարտք մը համարելով՝
կաղաչեմ որ ձեր սուրբական քաղց-
բութեամբն անոնք ընդունիք : Ձեզ
երկար ու երջանիկ օրեր շնորհելու
համար Աստուծոյ ըրած աղաչանքնե-

բուս՝ փոխարին կաղաչեմ որ ձեր
ծառային համար միշտ մի և նոյն բա-
րեւրտութիւնն ունենար, որ ես ալ
ձեր պաշտպանութեանը պատուէն,
ուստի և մինչև հիմա անկէ տեսած
մեծամեծ օգուտներէս չը զրկուիմ ։

Ողջ եղիք ։

Ձեր խոնարհ ծառայն

• • •

Գ. ՆԱՄԱԿ

Հօրեղբօր

Յարգոյ Հօրեղբայրս .


Ձեր երջանկութեանը համար բա-
րեւաղթութիւն ընելն ինծի մեծ բերկ-
րութիւն է, և ամեն օրուան փա-
փաքս ալ առ է ։ Աւստի Յատուծմէ կը
խնդրեմ որ, ես ձեր քովն եղած ա-
ռեւա՞ ինչպէս որ ձեր անուան օրերը
բարեբախտ և սրախութեան օրեր

կըլլային, աս նոր օրն ալ անոնց՝ պէս
ըլլայ: Եւ եթէ Աստուած խնդիրքս
կատարէ, անոնց պէս դունէ յիսունէն
աւելի ուրիշ նոր օրեր Ձեզի պարգև
պիտի ընէ: Նմանապէս կը խնդրեմ
որ ձեր իմ վրաս ունեցած սէրը՝ ձեր
սրտին մէջէն անպակաս ընէ որ ես
ալ երջանիկ ըլլամ: Ողջ եղիք:

Ձեր խնդակաթ Խղբօրօրդին

* * *

Յ. Գ. Կաղաչեմ, իմ սրտիկ բարե-
կամներս, ձեր սիրուն զաւակներն,
իմ կողմանէս գրկէք, ու անկեղծ
բարւեներս անոնց տաք:



Գ. ՆԱՄԱԿ

Ընտանի բարեկամի

Բարեկամ .

Գիտցած ըլլաք որ Կիրակի օր ձեր
անուան օրն է . և կը յուսամ որ սե-
ղանին գլուխն ան տօնախմբութիւնը
կատարող ջերմեամանդներուն մէկն ալ
եւ պիտի ըլլամ : Աղէկ գիտէք որ ես
աս բանէն շատ կախորժիմ : Իմ գալս
ձեզի իմացնելու համար առաջուց
սուրճանդակ ճը կը դրկեմ , սրուն ե-
թէ նեղկանաս անունը տաք , անի-
բաւութիւն ըրած չէք ըլլար : Կաղու-
շեմ , բարեկամութեանս համար ըլլայ ,
անիկա մարդասիրութեամբ ընդու-
նեցէք : Անոր հետ մէկտեղ հինգ վեց
հաս ալ հին գինուով լեցուն սրուակ-
ներ կան . անոնք ալ պահեցէք , մին-
չեւ որ ան ջանկայի կիրակին գայ :
Ասոնց համար շիշտանաք . ասոնք

ընելով բան մը կորսնցուցած չեմ ըլ-
լար . և կը խոստանամ որ տուածիս
կրկնապատիկը ձենէ կը հանեմ : Սյու-
շափի բաւական է . ձեր պատուական
ընտանեացն ինէ բարեւ ըրէք :

Ողջ եղիք :

Ձեր բարեկամը

* * *



Ե. ՆՍՄԱԿ

Հետք շատ բնականութիւն ջեղած
բարեկամի մը

Յարգոյ բարեկամ .

Շնորհաւոր ըլլայ ձեր անուան տօ-
նը : Քանի որ ասանկ յաջող դիպ-
ուածներ կը պատահին, որով ձեր
վրայ ունեցած անկեղծ սիրոյս ապա-
ցոյցները ձեզի կրնամ ցուցնել, շատ
կուրախանամ : Եւ ինչպէս չուրախա-
նամ . քանզի աս անանկ օր մըն է որ

ձեր ցանկալի բարեկամութիւնն ինձ ի ստանալ տուաւ : Արշուսամ որ ձեր սիրելի ընտանեացը երջանկութեանը համար ունեցած փափաքներուս վրայ չէք երկմտիր . Ողջ եղիք :

Անկեղծ սիրով ձեր բարեկամը

* * *

Զ. ՆԱՄԱԿ

Պատասխան


Սիրելի բարեկամ .

Երջանկութեանս համար ձեր ըրած մաղթանքներուն անկեղծութեանը վրայ ամենեւին կասկած չունիմ . քանզի գիտեմ՝ որ անոնք ընողն իս կը սիրէ : Արշուսամ որ դուք ալ իմ կողմանէս եղածներուն անկեղծութեանը վրայ չէք երկբայիր : Աղէկ գիտէք որ ամեն տարի տօնախմբութեանս օրը՝ բոլոր ընտանիքս ու բարեկամներս

մէկտեղ կը ժողովուին . ես ալ անոնց
մէջ գտնուելով երջանիկ կըլլամ : Գի-
տէք որ աս երջանկութիւնը ձեր ներ-
կայութեամբն առելի կատարեալ կըլ-
լայ . ուստի կը յուսամ որ աս անգամ
ալ առջիններուն պէս նոյն բախտը
կունենամ : Աս ալ գիտցէք որ եթէ
դուք չդալու ըլլաք , մեր ժողովքը
կատարեալ եղած չըլլար , ես ալ յու-
սացած ուրախութիւնս չեմ կրնար
վայելել : Ողջ եղիք :

Ձեր անկեղծ բարեկամը

* * *



Է. ՆԱՄԱԿ

Որդի մը հօրը ծննդեանը
տարեգարմին

Պատուական Հայր .

Արշալի գեղեցիկ է ինձի աս օրը .
աս ան օրն է ուր ձեզմով կեանք սաա-

ցողներուն երջանկութեանը համար
ծնաք. ուստի ասանկ օրուան մը հա-
մար պէտք է որ Աստուծոյ շնորհակալ
ըլլամ ու փառք տամ: Եթէ Աստուած
բաղձանքներս կատարելու ըլլայ, ին-
ծի շնորհք պիտի ընէ որ աս անսլա-
մելի ուրախութիւնս ուրիշ տարիներ
ալ ձեզի իմացնեմ, և աս դուարձու-
թիւնը վայելեմ: Եթէ աս հաստա-
տուն խորհուրդէս դառնալու պատ-
ճառ մը չըլլայ, իմ վարքս ու սէրս
տեսնելով՝ աշխարհք եկած ըլլալնուդ
համար աւելի ուրախ պիտի ըլլաք:

Կաղաչեմ, սիրելի և պատուական
Հայրս, ըսածներուս սրտէս ըլլալուն
հաւատացէք և ընդունեցէք ձեր օրհ-
նութիւնովն ալ հաստատեցէք օ

Ողջ եղիք:

Ձեր ամենահնազանդ որդին

* * *



Ը. ՆԱՄԱԿ

Բարեկամ մը իր բարեկամին
անոր ծննդեան օրը


Աղնիւ բարեկամ .

Ձեր ծնած երջանիկ օրուան վրայ
ահա տարի մ'ալ աւելցաւ , որուն
համար ձեզի ուրախակից ըլլալ կը փա-
փաքիմ : Քերեւս սխտի ըսէք . տարի
մ'ալ աւելցաւ ըսելու տեղ՝ տարի
մ'ալ սրակսեցաւ ըսելու էի : Աստի
և ուրախանալու տեղ տրտմելու էի :
Այո , կրնանք ըսել թէ անցած տարի
մը մեր կեանքին տարիներուն մէջէն
սրակսած ժամանակ մըն է . բայց և
այնպէս , քանի որ մեր ամեն մէկ օրը
մեզի շնորհք մըն է , միշտ նոր ժամա-
նակի մը հասնելնու համար ուրախ
ըլլալու իրաւունք ունինք : Ամեն նոր
օր կամ ամիս կամ տարի՝ ժամանա-
կի՛ն ձեռքէն յափշտակուած որս մըն է :


Աստուած տար որ երկուքս ալ ասանկ
չատ օրեր ձեռք բերէինք . դուք ձեր
բարեկամներուն օգտին համար , ես
ալ ձեր բարեկամութիւնը վայելելու ,
և ձեզի ծառայութիւններ ընելու ա-
ւելի երկար ժամանակ դտնելու հա-
մար : Ողջ եղիք :

Ձեր անկեղծ բարեկամը

* * *



2. ՆՈՐ ՏԱՐԻ ՇՆՈՐՀԱԻՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԳԻՏԵԼԻՔ

• —


Նոր տարւոյն կամ կաղանդի օր
անձամբ իրարու սյցելութիւն չգա-
ցողներուն համար սովորութիւն է ,
որ նամակով իրարու շնորհաւորութիւն

կընեն : Աս սովորութիւնը , թէպէտ
չատ հին է , բայց , ըստ մեր կարծե-
ւաց , ծիծաղելիներուն ամենէն մե-
ծըն է :

Միթէ բարեկամները տարւոյն ա-
մեն մէկ օրուան և ամեն մէկ վայր-
կենին մէջ իրենց բարեկամներուն մի
և նոյն առողջութիւնն ու մի և նոյն
երջանկութիւնը չե՞ն ցանկար : Միթէ
յաջողակ հողմոյ սպասող ճանապար-
հորդի մը պէս՝ պէ՞տք է որ մարդիկ
իրարու միշտ նոր նոր և աւելի եր-
ջանկութիւն մաղթելու համար , օրա-
ցոյցին մէկ նշանաւոր օրուանը սպա-
սեն :

Ուստի , յայտնի է թէ ան օրուան
չատերուն սիրոյ փափաքները սովո-
րութեան յարմարելու կամ նոր քա-
ղաքավարութեան մը համար են , ան
փափաքներն ազդողը սովորութեան
բւնութիւնն է ոչ թէ սիրտը : Բայց

և այնպէս , որովհետև ասոր ասանկ
ըլլալն ամեն մարդ գիտէ ու տակա-
ւին նոյն ձևերը կը կատարէ և ուրի-
շէն ալ կ'սպասէ , անոր համար կըր-
նանք ըսել թէ աս սովորութիւնն աս-
րարողութիւն մը եղած է , այնպէս
որ անիկա կատարելն ընդհանուր քա-
ղաքավարական պարտաւորութիւն մըն
է . ուստի և ոչ ոք կատարողը մեղադ-
րելու իրաւունք ունի : Մանաւանդ
որ , ինչպէս առաջ ալ ըսինք , քաղա-
քավարութեան մասին թող աւելորդը
մեզի պակսութիւն համարուի , քան
թէ բնաւ չընելը կամ թերի ընելը :



Թ. ՆԱՄԱԿ

Որդի մը հօրը

Սիրելի և պատուական Հայր .

Կաղաչեմ որ տարւոյս առջի օրուան


Համար գրած նամակս , սովորութիւն է , կամ անանկ կը վայլէ , ըսելով գրուած չհամարիք . այլ համոզուած ըլլաք որ ձեր վրայ ունեցած սիրոյս առաւելութենէն , միանգամայն յարգանաց և հնազանդութեան նշան մը ըլլալու համար գրած եմ : Ձեր առողջութեանն ու բարօրութեանը համար ըրած բարեմաղթութիւններս ալ կազաչեմ ընդունեցէք : Եթէ Աստուած փափաքներս լեցնելու ըլլայ , անշուշտ ձեզի երկար կեանք մը կը պարգևէ , և այնպէս ձեր բոլոր ընտանիքը , և մանաւանդ ես , ձեր անարժան որդին , երջանիկ կըլլանք :

Ձեր զաւակներուն վրայ ունեցած սիրոյ առաւելութենէն զկրնամ հասկընալ որ , եթէ բարի վարք ունենամ , կրցածիս չափ ձեզ աւելի երջանիկ պիտի կրնամ ընել , և ձեր մնացած օրերուն ալ խաղաղութիւն մը տալ :

Աղէկ համոզուած եմ որ, եթէ ձեր
երջանկութեանը համար Աստուծոյ
միայն աղաչանք ընեմ, ու գործքով
չջանամ, յանցաւոր կը գտնուիմ: Ուս-
տի գիտցած ըլլաք, սիրելի հայրս,
որ բոլոր ջանքս աս բանին համար է:
Աս ալ գիտցած ըլլաք որ ոչ թէ լոկ
որդիական սիրոյ պարտաւորութեանս
համար, այլ մանկութեանս վրայ ձեր
տարած այնչափ անհամար խնամքնե-
րուն նայելով՝ զիս աս բանին այն-
պէս պարտաւոր կը նանչնամ, որ
եթէ աս սուրբ պարտքը զանց ընե-
լու ըլլամ, իրաւամբ մեծ յանցանքի
տէր եղած կը համարուիմ: Իմ պար-
տաւորութիւնս ինձի այսչափն ըսել
տուաւ, բայց սրտիս ըսել տուած-
ներն՝ ասոնցմէ շատ աւելի են: Աեր-
ջապէս աս պարտաւորութեանս կա-
տարումը սրտիս որ աստիճան մեծ
ուրախութիւն և հաճութիւն է, նոյն-

չափի ալ մեծ օգուտ ու երանութիւն
կականկալեմ : Ողջ եղիք :

Ձեր խանդակաթ որդին
* * *



Ժ. ՆԱՄԱԿ

Բարեպաշտ անճի մը


Տէր .

Աստուծմէ կը խնդրեմ որ աս նոր
տարւոյս մէջ ձեզի բոլոր ան բաները
պարգևէ , որովք գոհ և խաղաղ կըր-
նաք ըլլալ : Մեր կեանքը կամաց կա-
մաց կանցնի , բայց առջևնիս յաւի-
տենականութիւն մը կայ որուն քայլ
առ քայլ երթալով կը մօտենանք : Մեր
ասլրիլ ուզելը՝ միայն Աստուծոյ ու-
նեցած պարտքերնիս վճարելու համար
պիտի ըլլայ . և կեանքերնուս խաղա-
ղութիւնն ալ շնորհք մը և օրհնու-
թիւն մը համարելու ենք , զոր Աստ.

ուած մեր վրայ կը հեղու , ու անով
մեզ պարտաւոր կընէ , որ իրեն հա-
ւատարմութեամբ ծառայենք : Ուստի
կը խնդրեմ Աստուծմէ , տէր , որ ձեր
կեանքն այնպէս ընէ որ ան ձեզի յա-
ւիտենականութեան համար դիւրին
ճամբայ մը ըլլայ : Կաղաչեմ , տէր ,
ձեզի համար ունեցած անկեղծ փա-
փաքներուս փոխարէն՝ ձեր արժանա-
ւոր աղօթքը շնորհէք , որուն ճշմար-
տապէս կարօտ եմ : Ողջ եղիք :

Ձեր խոնարհ ծառան

* * *



ԺԱ. ՆԱՄԱԿ


Պատասխան

Բարեկամ .

Քու ըրած բարեմաղթութիւններդ՝
ամենուն ըրածէն ինծի աւելի հա-
ճելի են , անոր փոխարէն ես ալ , թէ

տարւոյս սկիզբը՝ և թէ մէջը՝ քեզի
համար ըրածներէս աւելի յօժարու-
թեամբ ուրիշ մէկու մը համար ըրած
չեմ : Ես անանկ կը կարծեմ որ Աստ-
ուած խնդիրքներդ կը կատարէ , և
որուն համար որ աղօթես , երջանիկ
կըլլայ : Բայց աս ալ աղէկ դիտեմ որ
մէկուն սիրտը քու ցանկացած բանե-
րուդ վրայ խի՛նիս չափ չի տաքնար :
Ամենաբարին Աստուած ամենուս ալ
չնորհէ որ յաւիտենական բաներուն
յարգն աղէկ ճանչնանք : Քեզի հա-
մար ալ իմ անարժան աղօթքս աս է :
Տէրը մեզ ամօթով չընէ : Ողջ եղիք :
Քու անկեղծ բարեկամդ

* * *



ԺԲ. ՆԱՄՆԿ

Նամակ առ լսնց ընծայի

Սիրելիդ իմ .

Սիրոյս նշանները՝ միայն չոր ու ան .


պատուդ փափաքներով քեզի ցուցնելու
բռնադատուած ըլլալու համար՝ իս
չատ դժբաղդ կը համարիմ. բայց քե-
զի պէս սիրտ ունեցողը աւելի դիւ-
րին է գոհ ընել քան թէ ուրիշ մը :

Ուստի կը յուսամ որ տարւոյս սկիզ-
բը քեզի համար ըրած բարեմաղթու-
թիւններս սիրով կընդունիս, ու ա-
նոնց կատարումն ալ՝ Աստուծոյ ըրած
ազաչանքներէս կ'սպասես : Ինծի
չնորհած բարեկամութիւնդ՝ սրտիս ա-
մեն բանէ աւելի ցանկալի է, ու սէրս
ալ օր ըստ օրէ քու վրայ աճելով՝ ա-
նոր գինը աւելի կ'աւելնայ :

Ողջ եղիք :

Խանդակաթ բարեկամդ

* * *



ԺԳ. ՆԱՄԱԿ

Ընտանի բարեկամի մը

Բարեկամ :

Քեզի թուղթ գրելու միտք չունէի, ինչու որ՝ ի՞նչ պէտք է որ ես ալ երեսանց բարեկամներու ըրածն ընեմ: Քանզի շատերն աս օրուան օրը սովորութիւն է ըսելով կելլեն իրարու սուտ և կեղծ բաներ կը գրեն: Քու բարեկամդ ըլլալս քեզի հասկցնելու համար՝ ինչո՞ւ ասանկ օրի մը սպասեմ: Ինծի կուգայ որ՝ աս բանը քեզի իմացնելու համար՝ ասանկ սովորութիւն եղած քանի մը քաղաքավարական խօսքեր ընել պէտք չէ. ի՞նչ, սովորութիւն եղած քանի մը քաղաքավարական խօսքեր՝ . . . ես այդ կեղծ դէմքը պիտի պահեմ անոնց, որոնք կախորժին շողոքորթուելէ: Ուստի բան մը միայն քեզի իմացնել

կուզեմ. այսինքն քու երջանկու
թեանդ համար ըրած փափաքներս :
Ինչ ասկէ աւելին մի՛ փնտուեր . ին-
չու որ ես լմընցուցի , ու իմ աս օր-
ուան քեզի նամակ գրելուս պատ-
ճառն ալ աս է որ այնչափ սուտ ու
փուտ նամակներու մէջ , ճշմարիտ
բարեկամութեան սիրով գրուած
մ'ալ գտնուի : Ողջ լեր :

Հաւատարիմ բարեկամդ

* * *



ԺԴ. ՆԱՄՍԿ

Լմնցած տարւոյն մէջ ճախորդու-
թիւն քաջող բարեկամի մը

Անձկալիդ իմ .

Բարի օր և բարի տարի , սիրելի
բարեկամ . կը խնդրեմ Աստուծմէ որդ
աս տարի ձեզի միւս տարիներէն աջ

ւելի քաղցր ընէ , ու անյեալ տարի-
ներուն մէջ քաչած ճախորդութիւն-
ներուդ փոխարէն՝ քեզի արժան ե-
ղած խաղաղութիւնն ու հանգստու-
թիւնը պարզէ . ինծի համար ա-
ռւղածներս ասոնք են , ասոնցմէ ա-
ւելի բան չեմ ուզեր : Հանգիստ նըս-
տած եմ ու սկսած տաժանելի ճանա-
պարհորդութեանս վախճանին կ'ստա-
սեմ . և եթէ ճշմարիտը կուզես , ա-
նիկայ կրցածիս չափ երկնցնելու կը
նայիմ : Գուն ալ ինծի պէս ըրէ , ու
երջանկութեանդ համար առողջու-
թեամբ երկար ժամանակ ճանապար-
հորդէ : Ողջ եղիր :

Անկեղծ բարեկամդ

* * *

•



ԺԵՆԱՄԱԿ

Պատասխան

Սիրելի բարեկամ.

Մխիթարիչ նամակովդ իս կանխեցիր . թէպէտ իմ փափաքներս քու իղձերէդ ետքն են , բայց անկեղծութեան մասին անոնցմէ պակաս չեն : Երեսուն տարի է որ քեզ կը ճանչնամ , ու պատուական բարեկամութիւնդ կը վայելեմ : Աստուծմէ աւելի բան չեմ ուզեր , միայն թող տայ որ՝ աս բարեկամութիւնը երկար ժամանակներ ալ վայելեմ : Աստուած տար՝ թէ նամակս քեզի հասած ժամանակը՝ ողջ առողջ ըլլայիր , և թէ գիրս քեզի այնչափ հաճութիւն տար , որչափ քու պատուական գիրդ ինծի տուաւ :
Ողջ եղիր :

* * *



ԺԶ. ՆԱՄԱԿ

Տարւոյն լմննայուն մօտ մեծարոյ
մարդոս մը

Տէր .

Ուրիշ աւելի աղէկ կերպով մը նա.
մակս չեմ կրնար սկսիլ , բայց եթէ
ձեր առողջութեանն ու երջանկու.
թեանը համար ամեն օր ըրած փա.
փաքներս՝ առաջիկայ տարուան հա.
մար ալ կրկնելով : Եթէ Աստուած սըր.
տիս բաղձանքները կատարելու ըլլայ,
առաջիկայ տարին քեզի համար շատ
բարեբախտ պիտի ըլլայ . և եթէ ան.
ցած տարիներուն պէս՝ աս տարի ալ
ձեր բարութիւնը վրայէս պակաս չը.
նէք , ճշմարիտ երջանիկ պիտի ըլլամ :
Կը յուսամ որ աս շնորհքը ինծի կը
շարունակէք . ինչու որ բոլոր ջանքս
օրէ օր անոր աւելի արժանի ըլլալէ,
և դէպի ձեզ ունեցած յարգանացս

անկեղծութիւնը ոչ միայն խօսքով՝ այլ
ուրիշ կերպով ալ յայտնելու առիթ
ներ գտնել : Ողջ եղիր :

Ձեր խոնարհ ծառան

* * *



ԺԷ. ՆԱՄԱԿ

Պատասխան

Ազնիւ բարեկամ .

Քու բարեկամութեանդ հաստա-
տութիւնն ու անկեղծութիւնը՝ շատ
ժամանակ է որ կը վայելեմ : Ասանկ
ըլլալուն համար՝ աարիւնեքը ինչպէս
կ'սկսին՝ այնպէս կը լննան , ու ինչպէս
որ կը լննան , այնպէս ալ կ'սկսին .
բայց կը ցանկամ որ ասրւոյն մէջն
ասանկ օր մ'ըլլայ՝ որ երկուքիս փա-
փաքները մէկ տեղ գտն , ու սիրտդ
համարձակ ինծի բանաս : Թէպէտ

սրտիդ փափաքները գիտեմ, սակայն
անոնք կրկին լսելով աւելի կը զուար-
ճանամ : Անոնց փոխարէն կը ցանկամ
որ՝ քեզի ալ Աստուած կատարեալ ու
ուղղութիւն , հանգստութիւն , ու
երջանկութիւն պարգևէ . և կը յու-
սամ թէ քու ուղածներդ ալ ասոնք
են : Աղջ եղիր :

Քու անկեղծ բարեկամդ

* * *



ԺԸ. ՆԱՄԱԿ

Եղբօրորդի մը իր հօրեղբօրը

Սիրելի հօրեղբայրս .

Ասանկ օրուան մը մէջ՝ սրտանց սէր
չունեցողներն անպամ՝ իրարու բու-
րեմաղթութիւններ ընելէ ետքը , ես
ինչպէս անկեղծ սիրովս լուռ կենամ ,
ու մեր իրարու վրայ ունեցած փոխա-

դարձ սիրոյն մեծութեանը շափ՝ անկեղծ բարեմաղթութիւններ չընեմ : Քու երջանկութիւնդ միանգամայն խնայ . անոր կատարեալ ըլլալուն համար աղօթք ընելը՝ ինծի համար ալ աղէկութիւն ուզելէ : Ըսե՞մ արդեօրթէպէտ սա նամակս շատ մեծ ուրախութեամբ կը դրեմ, բայց կը վախնամ ալ որ շահասիրութեան օգուով գրուած չկարծես : Եթէ եղբորորդի մը՝ իր հօրեղբորը համար բարեմաղթութիւններ ընէ՝ ու բարի բաներու փափաքի, իր շահուն համար ըրած կը կարծուի : Աս բանին սիրտս շատ կը նեղանայ . ու անոր համար զրկելու ընծաներդ պիտի չընդունիմ, որ անկեղծութենէս կասկած մը չընես : Եթէ ինծի աւելի հաճոյական ընծայ մը ընել կուզես՝ բարեկամութեանդ յարատեւութեանը վրայ իս ապահով ըրէ : Իմ ուզածս միայն սա է . և եթէ

անոր վրայ ապահով ըլլամ իրաւ մեծ
վաստակ ըրած պիտի ըլլամ :

Ողջ եղիր :

* * *



ԺԹ. ՆԱՄԱԿ

Մեծարոյ մարդոս մը

Տէր իմ .

Նոր տարւոյս սկիզբը նամակս ին
կերպով աւելի ազկկ կրնամ սկսիլ ոչ
բայց եթէ ձեզի երջանկութիւն մաղ-
թելով : Ստիկա առաջին և ոտքը
պարտքս է որ ձեզի կը հատուցանեմ .
և եթէ սիրով կընդունիք , կատար-
եալ երջանիկ կըլլամ : Իուք ամեն
ժամանակ ինծի բարերարութիւն ցը-
ցուցիք . անանկ որ ըստ արժանւոյն
չնորհակալ չեմ կրնար ըլլալ . բայց
կաղաչեմ որ շարունակէք : Ողջ եղիք :

* * *

Ի. ՆԱՄԱԿ

Երկար ժամանակ առանց նամակի
ձգուած մեկու մը

Բարեկամ .

Շատ ուրախ եմ սա փոխադարձ
պարտաւորութեան կերպը հաստատ-
ուած ըլլալուն . պարտաւորութիւն մը
զոր ասրւոյն առ օրը մարդիկ իրարու
կըհատառցանեն. ինչու որ սա սովո-
րութեան առթիւն՝ ձեզ մտնալս պի-
տի դարմանեմ, որ արդարեւ յանդիմա-
նութեան արժանի է : Համարձակա-
պէս ձեզի կը խոստովանիմ որ բնաւ
նամակ գրելու երես չունիմ : Ար ջա-
նամ որ սա պատեհութիւնը ձեռքէ
չփախուցած խոստովանիմ թէ՛ թէ ե
ձեզ մուցած կերեիմ , բայց միշտ ձեր
երջանկութեանը համար բարեմաղ-
թութիւններ ընելի դադարած չեմ :
Սուաջ սիրտս ինչպէս որ գիտէիր՝ հի-

մայ ալ անանկ է . միայն ժամանա-
կին պարագաներն են՝ որ անիկայ
փոխուած ցորցին : Եւ որովհետեւ
գիտեմ թէ ձերինն ալ փոխուած չէ ,
կը յուսամ որ դուք ալ առաջ ինչ որ
էիք՝ հիմայ ալ նոյնն էք : Եւ եթէ
տարուոյս սկիզբը ինձի համար խընդ-
րելու բան մը ունիմ , ձեր բարեկա-
մութիւնն է՝ զոր միշտ շարունակե-
լով իս առաջուան պէս երջանիկի ը-
նէք : Ողջ եղիք :

* * *



ԻԱ. ՆԱՄԱԿ

Պաշտպանի

Բարեկամ .

Նամակիդ վրայ աւելի ուրախացայ
քան թէ դարմացայ : Քեզի բնական
եղած անկեղծ համարձակութիւնը ա-
նոր մէջ ալ յայտնած ես : Ըլ. ու.

Թեանդ նայելով՝ կը կարծէի թէ իս
մուցած ես և կը զարմանայի : Սկսած
էի մտածել թէ արդեօք ինչ ըրած
եմ որ այսպէս երեսէ իյնամ : Վեր-
ջապէս իս մեծ անհանդուստութենէ
ազատեցիր , ու կրկին ինծի շնորհե-
ցիր բարեկամութիւնդ զոր կը կարծէի
թէ կորանցուցած եմ : Իրաւ որ աս
ինծի մեծ պարգև մըն է , ու տարիս
երջանկութեամբ անցնելը մեծ բարե-
բախտութիւն կը համարիմ :

Սաւտ կըլլայ ըսել թէ ասոր փոխա-
րէն , ես ալ կրկին իմ բարեկամու-
թիւնս քեզի կը նուիրեմ , թէպէտ ու-
նիկա քենէ երբէք ետ առած չէի :

Ողջ եղիր :

* * *



3. ԹՈՒՂԹՔ ՈՒՐԱԽԱԿՑՈՒԹԵԱՆ

ԳԻՏԵԼԻՔ

Ուրախակցութեան թղթերուն մէջ
պէտք է որ սիրոյ՝ քաղաքավարու-
թեան ու երախտողիտութեան նշան-
ներ դանուին : Մեր բարեկամներուն
հետ ուրախանալ պէտք է , որովհե-
տեւ անոնց օգուտք կուղենք . մեր
պաշտպաններուն , մեծերուն ու հա-
ւասարներուն բարեմտղթութիւններ
ընելու ենք որ տպերախա ու նուխան-
ձոտ չկարծուինք : Մեր բարեկամնե-
րուն թուղթ գրելը դիւրին է , ին-
չու որ ինչ որ կ'զգանք՝ ան ալիտի
գրենք : Բայց մեր պաշտպաններուն
ու հաւասարներուն գրել աւելի դժ-
ուարին է , ինչու որ մեր ամեն զգա-
ցածր ազատարար անոնց չենք կրնար
հասկցնել . և երբեմն կը պատահի ալ

որ բնաւ գրելու բան մը չենք կրնար
դանել: Անանկ ատեններ սովորաբար
գործածուած իմաստներ գործածելու
է, որ թէպէտ գովելի չէ, բայց մնաս
չունի: Ինչու որ անանկ մեծ մարդ իկ'
աւելի իրենց սրտիւ ըլլալուն կը նա-
յին, քան թէ գրուածներուն անկեղ-
ոծ թեանը:

Աս կերպ թղթերուն մէջ եթէ քիչ
մը զուարթութիւն ալ ըլլայ, մնաս
չունի, ասով սովորական եղած քա-
ղաքովորական խօսքերուն ցամաքու-
թիւնը կը ծածկուի:

Ձգուչանալու է որ աս կերպ նա-
մակները՝ երկար չըլլան: Քիտնալով
որ մեծէ ուրիշ գրողներ ալ կան, անոնց
գրածներն ալ կարդալու ժա-
մանակ թող տալու է. մանաւանդ որ
աս անսակ թուղթի՝ ինքնին ձանձ-
րալի են, մանաւանդ նախակին ընդու-
նողին:



ԻՐ. ՆԱՄԱԿ

Մեծ պաշտօնի մը հասնող
մեկոն մը

Մեծապատիւ տէր .

Ձեր (պաշտօնին անունը հաս դը-
նելու ե) ընտրուելուն համար, հա-
ճեցէք, որ հասարակութեան ուրա-
խութեանը ես ալ մասնակից ըլլամ :
Ձեր իմաստութեանը, ճարտարու-
թեանն ու արդարութեանը համբա-
ւոյն համար արդէն հասարակաց սիր-
տը ձեր վրայ տաք է : Ամեն մարդ-
այնպէս կը կարծէ, որպէս թէ աս
պաշտօնը կտտարելու համար մինակ
ծնած էք : Տէր, բոլոր հասարակու-
թիւնը, մանաւանդ ես ձեր ծառայն
չատ ուրախ եմ. ու ձեռնէ արդարու-
թենէ ուրիշ բան չենք յուսար :

Ողջ եղիք :

ԻԳ. ՆԱՄԱԿ

Նոյն նիւթին վրայ պողտպանի մը

Տէր իմ,

Ձեր աս պաշտօնին հասնիլը լսելով՝ որչափ ուրախանալս չեմ կրնար ըստ բաւականին հասկցնել: Արդարեւ մինչև հիմայ ձեր ինծի ըրած բարերարութիւնները վայելելէս ետքը, ասանկ գիտուածի մը համար ասանց ուրախանալու ի՞նչպէս կրնայի կենալ: Ասիկայ ուրիշ բան չէ, բայց եթէ բարերարութիւններուդ փոխարէն Աստուծմէ ձեզի վարձք մը՝ որ ամենէն աւելի ձեզի արժանի է. որովհետև ամենը ձեզ կը սիրեն ու կը պատուեն: Անտարակոյս գիտեմ որ մինչև հիմայ ուրիշները ձեզի շատ բաւեմալթութիւններ ըրած են. բայց աս ալ հաստատ գիտեմ որ անոնց մէջ իմ

Երածներէն անկեղծը դժուարաւ կը
զտնաւի : Ողջ եղիք : * * *

ԻՌ. ՆԱՄՍԿ

Ազգականի


Յանկայի բարեկամ .

Ձեր առ աստիճանին հասնիլը լսե-
լով, շատ ուրախացայ : Աս յառաջա-
դիմութեան վրայ թէպէտ դուք ալ
պիտի ուրախանաք, բայց աս աստի-
ճանը՝ ձեր հասնելու աստիճաններուն
վերջինը չէ : Ձեր սր եղբօրօրդ իս էք
և ձեր ընտանեացը պատուոյն համար
աւելի մեծերը կը ցանկամ : Թէ յա-
ջողութեան և թէ ձախորդութեան
մեղի բացած ճամբաներուն տեղողու-
թիւնը երկար կըլլայ : Ես իմ բախտիս
համար ամենեւին ուրախանալու տեղ
չունիմ, գունէ աղղականներուս ու

բարեկամներու յառաջացող իմու թեանը
նայելով ուրախանամ, ինչպէս որ այս
օր ձեր վրայ ուրախացայ :

Ողջ եղիք :

* * *



ԻԵ. ՆՍՄԱԿ

Դառաստանի մեջ յողորմ գտնուող
բարեկամի մը

Բարեկամ.

Ուրախ եմ, որ ըրիւ չըրիւ յաղթեցի
քեզի ուրախակից եմ : Իրաւունքը
քուկդ ըլլալուն՝ ամենեւին
կասկած չունէի, որովհետեւ առաջ
ջուց դիտէի որ՝ դուն արդարասէր
մէկն ըլլալով, անիրաւ բանի ձեռք
չես՝ զարներ : Հիմայ սրտիս ուրախու
թիւնը՝ թղթով միայն քեզի իմացնե
լու կը փութամ . բայց կը յուսամ որ

քիչ ատենէն բերնով ալ յայտնելու
այատեհութիւնը կուեննամ :

Ողջ եղիր , * * *



ԻԶ. ՆԱՄԱԿ


Պատասխան

Սիրեցեալդ իմ .

Դատիս յաջողութեանը համար ինծի
ուրախակից ըլլալուդ շատ շնորհակալ
եմ . մանաւանդ իմ վրաս աղէկ կար-
ծիք ունենալուդ համար մեծապէս ու-
րախ եղայ : Ամեն ժամանակ ջանքս
ասանկ մէկ գովութեան մը արժանի
ըլլալ էր , և ասիկայ ինծի շատ մեծ
փառք կը համարիմ . քանզի քեզի պէս
անձի մը բերնէն կը լսուի , որուն
յարգը արդէն ամենը կը ճանչնայ :

Ողջ եղիր :

* * *



Ի՛Է. ՆԱՄԱԿ

Նոր ամուսնացող մարդու մը

Յարգոյ բարեկամ .

Ձեր երջանիկ սիրոյ կապը լսելով շատ ուրախացայ : Աստուծմէ խընդրածս մինակ աս է որ քեզի ու սիրելի ամուսնոյդ երկար կեանք պարգեւէ . քանզի գիտեմ որ ուրիշ բաներն առաքինութեամբդ ու բնական կարողութեամբդ ստանալու կը զօրես : Եւ որովհետեւ առաքինի մարդիկ պէտք է որ չպակսին , ու քու զաւակներդ ալ քու հովանաւորութեանդ տակը մեծնալով՝ քենէ տեսած օրինակներով՝ քեզի պիտի նմանին , անոր համար կը խնդրեմ Աստուծմէ՝ որ քեզի շատ զաւակներ ալ տայ : Դուն և քու սիրելի ընկերդ՝ ասկէ ետեւ մէկ մարմին՝ մէկ անձ մը պիտի համարուիք . ուստի կաղաչեմ որ եր-

կուքդ ալ հետս մէկ բարեկամի ալէս
ըլլաք . բայց անանկ բարեկամութիւն
մը ըլլայ : որ մինչև հիմայ քու ինծի
ցուցուցած բարեկամութեանդ հա-
ւասարի : Ոչք եղիր :



ԻԸ. ՆԱՄԱԿ

Պատասխան

Սիրելի բարեկամ .

Ամուսնութեանս համար ցցուցած
ուրախութեանդ նայելով սիրոյդ մե-
ծութիւնը կրկին անգամ ձանչցայ :
Ուստի պարտաւոր եմ որ բարեկամու-
թեանս վրայ քեզ նորէն վստահ ը-
նեմ : Արեմն ապահով եղիր , վիճակս
փոխելով սիրտս փոխած չեմ , և եթէ
հիմայ անոր խօսքը միայն կընեմ , կը
յուսամ որ անանկ երջանիկ որ մ'ալ
սխալի դայ որ անիկայ քու աչօքդ տե-

ասածի պէս պիտի ըլլաս, և պիտի հա-
ւատաս որ ինէ առելի քեզ սիրող
մարդ շունիս : Աղջ եղեր :

* * *

ԻՔ. ՆԱՄԱԿ

Նոյն Եիսքից վրայ ուրիշ
բարեկամի մը

Ազնիւ բարեկամ .

Ամուսնութիւնդ լսելով՝ քեզի հա-
մար Աստուծակէ քանի մը բան խընդ-
րելու էի. սակայն ուրախ եմ որ Աստ-
ուած անոնք քեզի արդէն չնորհած
է : Կարծես թէ Աստուած շատոնց-
ուրնէ ի վեր քեզի համար արժանի
ընկեր մը վնտուած ու պատրաստած
ըլլալով, վերջապէս՝ ձեզ իրարու շնոր-
հեց, հիմայ երկուքդ ալ երջանիկ էք :
Ինքնին յայանի է որ ասանկ երկու
ընտրեալ սրտերու միաւորութենէն

արչափ օրհնութիւններ յառաջ պիտի
դան : Ողջ եղիք :

• • •

Լ. ՆԱՄԱԿ


Հարուստ մարդու մը հետ
նոր ամուսնացած կին մը
: ուրիշ կնկան մը

Տիկին .

Հիւանդութեանս պատճառաւ
տունը մնալու ստիպուած ըլլալով նե-
րէ որ քու արժանաւոր և երջանկաւ ի՞թ
ամուսնութեանդ համար զգացած ու-
րախութիւնս քեզի գրով իմացունեմ
Աստուած բոլոր աւաքինութիւններ
րով քեզ զարդարած էր : Հիմայ հա-
րըստութիւն ալ տուաւ . ինչու որ
քենէ մէկ ուրիշը՝ անիկայ քեզի չափ
աղէկ էր կրնար գործածել : Անկէ
զատ, քեզի անանկ ընկիր մ'ալ ընտ-

րեց որ՝ անթիւ բարի բնաւորութիւն-
ներով զարգարուած է, քու վրադ
ալ կատարեալ սէր ունի. աս ոգար-
գեւն արդարեւ գին չունի: Անոր քու
վրադ սէր ունե՛նալը՝ յայտնի է. քան-
զի քանի որ քեզ ամեն բանէն աւելի
առաքինութեանց համար ընտրեց,
հարկաւ պիտի սիրէ: Աստուած ձեզի
պէս երկու ընկերներ, որ միայն սի-
րոյ համար միացած էք՝ անշուշտ պիտի
օրհնէ: Ձեր վրայ ունեցած սէրս՝ յա-
ւիտեան պիտի ըլլայ, և կը յուսամ
որ ձեր սէրն ալ ինձի համար նոյն-
պէս պիտի ըլլայ: Ոգջ Եզիք:

* * *



ԼԱ. ՆԱՄԱԿ

Անդրանիկ գաւկի ծննդեան համար
Բարեկամ.

Սիրելի տիկնոջդ զաւակ մը ունե-

նալուն լուրը՝ իս շատ ուրախացոյց՝
Ս,ս անանկ օրհնութիւն մընէ որ Սաս-
ուած իր ուղածին կուտայ, անոր հա-
մար մենք ալ պէտք է որ անկէ շնոր-
հակալ ըլլանք : Ահ, երանի թէ ձեզի
պէս, իրենց զաւկըներն տղէկ կըր-
թելու եղանակը զիտցող, ու հարըս-
տութեան հետ՝ իրենց օրաքինու-
թիւնն ալ անոնց ծառանդութիւն
տուող ծնողքները շատ ըլլային : Չկըր-
նար ըլլալ որ ձեզի օգուտ մը ըլլայ
և ես չուրախանամ . մինչև ի մահ տլ
այնպէս պիտի ըլլամ : Աղջ եղիք :

* * *



ԼՐ. ՆԱՄԱԿ

Զարկի ծննդեան համար

Պարոն .

Քեզի զաւակ մը ծնանելը լսելով
շատ ուրախացայ : Ըսել է թէ քու

առաքինութիւններուդ ուրիշ յաջորդ
մըն ալ պատրաստուած օքեզի պէս
ուրիշ մ'ալ ծնած է : Ասոր համար
ուրիշներն ալ անշուշտ պիտի ուրա-
խանան : Աս դիպուածն աղէկ պա-
տահութիւն մըն է՝ որ ձեր վրայ ու-
նեցած յարգս կրկին յայտնեմ ու ան-
կեղծութեանս վրայ ձեզ ասպահով ը-
նեմ : Ողջ եղիք .

* * *

ԼԳ. ՆԱՄԱԿ

Հօր մը իր որդւոյն
ամուսնութեանը վրայ

Բարեկամ .

Ինձի դաւկիդ հարսանեացը վրայ
տուած լուրէդ աւելի մեծ ուրախու-
թեան լուր մը չէր կրնար ըլլալ : Ո-
րովհետեւ անկարելի է որ ձեզի եղած
բաներուն վրայ գոհութիւն և ուրա-

խութիւն չիմանամ, անոր համար աս
դէպքին մէջ անհնարին է ինձ ձեր
խնդութեանը մասնակից չըլլալ: Կը
յուսամ որ աստեկ կարևոր կէտի մը
մէջ՝ ցցուցած սիրոյ և գոհութեան
նշաններուդ փոխարէն՝ զաւակդ ալ
իր պատուոյն արժանի եղած երախ-
տագիտութիւնը՝ պիտի ունենայ: Եւ
Աստուած տայ որ մինչև մահուանդ
օրն՝ անկէ գոհ ըլլաս, ու ինչպէս որ
աս լուրն ինձի տալով իս ուրախա-
ցուցիր՝ անանկ ալ կրկին շնորհք ը-
նես հաւատալու՝ որ ես ալ դէպ ի
քեզ յաւիտեան մի և նոյն սէրս ու
անկեղծութիւնս պիտի ունենամ:

Ողջ եղիր:

* * *



ԼԴ. ՆԱՄԱԿ

Հօր մը իր աղջկանը
ամուսնութեանը վրայ

Բարեկամ .

Ազնիւ աղջկանդ. ամուսնութեանը
վրայ հիմայ ես ալ քեզի չափ կուրա-
խանամ . կը ցտնկամ որ անոր արժա-
նութեանը չափ Աստուած անի-
կայ երջանիկ ընէ . և արդարեւ աս-
ղաւակը ինչ բանի արժանի չէ : Եւ
որովհետեւ Աստուած առաքինին ան-
վարձ չի թողուր , անոր համար ա-
նեկրկրայ եմ՝ որ դուն ալ անոր եր-
ջանկութիւնը տեսնելով՝ միշտ պիտի
ուրախանաս : Ողջ եղիք

* * *



ԼԵ. ՆԱՄԱԿ

Պատասխան

Յանկայի Բարեկամ .

Ձաւկիս ամուսնութեանը վրայ
գրածներէդ հասկցայ , որ դուն ինծի
սլատաճած բաներուն վրայ անտար-
բեր չես : Շատ շնորհակալ եմ քենէ ,
և հաղաչեմ , հաւատա , որ ես ալ իմ
կողմանէս շատ ուրախ պիտի ըլլամ ,
եթէ քու երջանկութեանդ վրայ նոյն
զդացումն ունենալս քեզի իմացնելու
սլատե՛կութիւնն ունենամ :

Ողջ եղիր :

* * *

ԼԶ. ՆԱՄԱԿ

Ճանապարհորդութենէ ողջ առողջ
ես դարձողի մը


Բարեկամ .

Ողջ առողջ դառնալուդ վրայ շատ

ուրախ եմ, և աս ուրախութիւնս
մինչև հիմայ քեզի խնացուցած կըլ-
լայի . բայց խորհելով որ ճամբէ եկած
և շատ նեղութիւն քաշած ես, ուստի
և հանգստանալու պէտք ունիս, անոր
համար համբերեցի, որ քեզի անհան-
գըստութիւն շտամ : Փառք Աստու-
ծոյ որ կրկին մեզի դարձար . բարե-
կամներդ ու մանաւանդ ես՝ ամեն որ
Աստուծմէ աս միայն կը խնդրէինք :
Եւ ինչպէս որ դուն առջի սրտովդ
դարձար՝ դիտցած ըլլաս որ ես ալ
նոյն սիրտն ունիմ, և մանաւանդ
առջի սէրս ևս առաւել աւելցած է .
կաղաչեմ որ աս խօսքիս հաւատաս :

Ողջ եղիր :

* * *



ԼԷ. ՆԱՄԱԿ

Նոր հիւանդութեան ելող մեկու մը

Սիրելի բարեկամ.

Նրկար հիւանդութեան ժամանակը՝ որչափ վախ և անձկութիւն որ ունեցայ, նորէն առողջանալու ալ լսելով՝ այնչափ աւելի կուրախանամ: Այսուհետև առողջութեանդ աւելի զգուշացիր ըսելն աւելորդ է, քանզի արդէն քու զգուշաւորութիւնդ՝ գիտեմ. սակայն բարեկամութեանս պարտքն է պատուիրել որ քու անձը շատ աղէկ նայիս: Օրէ օր ուժ առնելու ես, ուստի ամեն բան խոհեմութեամբ գործէ, որպէս զի մենք ալ քիչ ատենէ քեզ առաջուան պէս առողջ տեսնելու ուրախութիւնն ունենանք: Եթէ ատցաւերը քեզի կրել չտալք վափաքելով միայն ըլլար, ան-

շուշտ իմ փափաքներովս ամենևին
հիւանդ ըլլալու չէիր : Ողջ եղիր :

* * *




Լ.Ը. ՆԱՄԱԿ

Պատասխան

Բարեկամ .

Առողջանալուս վրայ ցցուցած բարեկամական նշաններուդ համար քենէ որչափ շնորհակալ ըլլամ՝ քիչ է : Արդարեւ ուժս օրէ օր կաւելնայ . բայց քու խոհեմ խրատդ շմոռնալով՝ ինքզինքս խիստ աղէկ պիտի նայիմ : Ամեն բանէ աւելի ուտելու ախորժակս չափաւորելու կաշխատիմ, քանդի ախորժակս այնպէս սաստիկ է որ կարծես թէ աշխարհք պիտի կըլլեմ : Ինձի համար քրած բարեմաղթութիւններուդ շատ շնորհակալ եմ, ու անոնց փոխարէն կը ցանկամ, որ ես

ալ ապերախա շըլալս քեզի իմացու-
նելու կարող ըլլամ: Ողջ եղի՛ր:
* * *



ԼԹ. ՆԱՄԱԿ

Նոյն նիւթին վրայ ուրիշ
բարեկամի մը

Յանկալի բարեկամ.

Եթէ բարեկամներուդ վրայ ինչ
կարծիք ունենալդ չդիտնայի՝ առնդ-
ջանալուդ համար դգացած ուրախու-
թիւնս՝ աղէկ մը քեզի կը նկարագ-
րէի. բայց դուն ինքնին դիւրաւ կը բ-
նաս դուշակել: Արդարեւ ինծի հա-
մար ինչ աւելի մեծ ուրախութիւն
կրնայ ըլլալ, եթէ ոչ տեսնել որ բա-
րեկամներուս ամենէն ցանկալին որ
դուն ես, մահուան վտանգին ալ-
կոծութենէն ազատեցար: Աս մասին
հիմայ իմ դգացածս, քու սիրտդ քե-

զի կիմացնէ : Իրաւ որ առաջուց մեր
սէրը որչափ որ իրարու հետ ամուր
կերպով մը կապուած էր, առ վտան-
դը՝ որ քիչ մնաց մեզ իրարմէ պիտի
զատէր, աւելի տճրցուց : Քու առող-
ջանալովդ ես ալ առողջացած եղայ .
քեզի եղած աղէկութիւնը՝ Աստու-
ծոյ ինձի ըրած շնորհքներուն ամե-
նէն մեծը կը համարիմ : Այսուհետեւ
անկէ ըրած խնդիրքս միայն առ է որ
քեզ պահէ, որպէս զի եթէ հնար է՝
քու բարեկամութենէդ չզրկուիմ :

Ողջ եղիք :

* * *



Խ. ՆԱՄԱԿ


Պատասխան

Բարեկամ .


Ղրկած նամակդ՝ որ բարեկամու-
թեանդ կենդանի մէկ պատկերն է ,

սիրտս ան աստիճան ուրախութեամբ
 լեցուց որ՝ առողջութեանս մեծ նը-
 պաստ պիտի ընէ : Իմ առողջութեան
 ցանկալս՝ միայն քու սիրոյդ անար-
 ժան շըլալս քեզի փորձով ցուցնելու
 համար է : Նամակիս կարճութեանը
 ներէ , ինչու որ դեռ ասկէ երկարը
 չեմ կրնար գրել : Ողջ եզիր :


* * *



4. ԹՈՒՂԹՔ ՅԱԻԱԿՅՈՒԹԵԱՆ



ԳԻՏԵԼԻՔ



Աս կերպ նամակներուն մէջ • կո-
 ըրատեան տիրոջը ցուին սոսկ մաս-
 նակից ըստ մը կրնանք զըցունել •
 Բայց կրնանք հաւատոյ ճշմարտու-
 թիւններէ մխիթարական խորտոներ

ալ գրել : Մարդուս ըրած կորուստը
որչափ մեծ ու կեանքն ալ որչափ
հարկաւոր ըլլայ , Աստուծոյ անհուն
գաղտնաբան ամեն բան իսպառ կը
ջնջէ . և յիշելով որ աշխարհիս վրայ
մեր անկէ բաժնուած մնալը յաւիտե-
կան չէ , կը մխիթարուինք : Եթէ
մեռնողը արժանաւոր մէկն է , մեռ-
նողին ազգականներուն անոր վրայ
գովութիւն կրնանք գրել՝ բայց աս
ընելու համար մեծ ճարտարութիւն
ու փափկութիւն կը պահանջուի . ա-
նոր համար պէտք է որ աս տեսակ
խրատները համառօտ ըլլան :



ԽԱ. ՆԱՄԱԿ

Բարեկամի մը որուն կնիկը
մեռած է

Բարեկամ .

Գիտեմ որ ըրած կորուստդ մեծ է .

ուստի աս նամակս ոչ թէ քեզ մխի-
թարելու, այլ իմ արցունքներս ալ
քու կիներուդ հետ խառնելու համար
կը գրեմ: Ախճանեալը որուն մահ-
ուանը վրայ սուգ կընես, իրեն վա-
յելուչ եղած Վառաքինութիւններուն
ամենն ալ ունէր, և առող մեծ պատ-
ուոյ արժանի էր: Մայրերու մէջ ա-
մենէն ընտիրը, և տառաճոց մէջ ա-
մենէն քաղցրն ու սիրելին էր, անոր
իմաստութիւնն էր որ տունը՝ այն-
պիսի խաղաղութեան ու երջանկու-
թեան հասուցած էր: Անհամար բա-
րի բնաւորութիւններ ունէր, և քեզ
ալ ճշմարիտ սիրող կը սիրէր. քանզի
բոլոր փափաքը քեզ մարդոց մէջ ա-
մենէն երջանիկն ընել էր:

Գիտեմ որ ասոնք գրելով քու ցու-
ւազին սիրտդ կրկին կը ցաւցնեմ,
բայց ասանկ կսկիծ մը մտացնելու հա-
մար՝ ինչ կրնամ ըսել: Մենք ան մեռ-

նողը՝ որ մեզի այսչափ կսկիծ պատե-
ճառեց, գովելու ու ողբալու պար-
տաւոր ենք. բան մը միայն կայ՝ զոր
եթէ միտք բերելու ըլլանք, անոր
մահուանը վրայ կրնանք մխիթարուիլ.
այսինքն աս թշուառ կենաց կարճու-
թիւնը, և աւելի երջանիկ կեանքի
մը գոյութիւնը, կեանք մը ուր բոլոր
բարեկամներ՝ այլ ևս չզատուելու
պայմանով իրարու հետ պիտի միա-
նան: Մեր յայտն աս է՝ բարեկամ,
ուստի դու ալ ան անձը՝ որուն վրայ
կողբաս հոն պիտի գտնես ու հոն
վերստին ստանաս:

Եթէ անկեզծ բարեկամութիւն մը
և անչափ յարգ ու պատիւ քու ցա-
ւած սրտիդ դարման մը կրնան ըլ-
լալ, վստահ եղիր որ ասոնք իմ սըր-
տիս մէջ պատրաստ են: Ողջ եղիր:

* * *



ԽԲ. ՆԱՄԱԿ

Բարեկամի մը որունք քոյրք
մեռած է

Սիրելի բարեկամ .

Նսազելի քրոջդ մահը՝ իրաւ ինծի
մեծ ցաւ տուաւ : Ես ալ քեզի հետ
կողբամ . նախ որ քեզի եղած որ և
իցէ ֆնաս ինծի եղած կը համարիմ .
երկրորդ ես հանգուցեալն անձամբ
ալ կը ճանչնայի , և անոր արժանա-
ւորութեանը համեմատ ալ զինքը կը
յարգէի : Պէտք է որ դուն քու իմաս-
տութեամբդ ու քաջութեամբդ՝ բախ-
տին աս հարուածին դիմանաս . մա-
նաւանդ . որ աշխարհիս աս տեսակ
ձախորդութեանցը մէջ՝ մխիթարուե-
լու չափ բարեպաշտութիւն ալ ունիս :
Ուստի ինծի ուրիշ բան չի մնար ,
բայց քեզի հաւտացնել թէ ինչպէս

ըսի, քեզի եղած որ և իցէ մնաս,
ինծի եղածի պէս կը համարիմ:

Ողջ եզիք:

* * *



ԽԳ. ՆՍՄԱԿ

Հօր մը որուն որդին մեռած է

Բարեկամ:

Քեզ սիրելուս ու յարգելուս հա-
մար՝ զաւկիդ կորուստը քեզի շափ ես
ալ կսկծացի: Քեզի պէս իմաստուն
ու քաջ մարդ մը պէտք է որ ասանկ
դժուարին փորձի դիմանայ: Սրդարև
մինչև հիմայ քեզի եղած մնաս: Եւ
ամենէն մեծն աս է. բայց կը յուսամ
որ ասկէ առջի ձախորդութիւններէն՝
Սատուծոյ կամացը հնազանդ իլն ազէկ
սորված ես: Ես իմ ձախորդութիւն-
ներուս մէջ աս միջոցը կը պորձած եմ:

և կուգեմ որ դու ալ աս կսկծիդ մէջ
ան գործածես : Ողջ եղիր :

* * *

ԽԴ. ՆԱՄԱԿ

Բարեկամի մը որունց հայրը
մեռած է

Բարեկամ .

Քու ազնիւ հօրդ կորուստը՝ ինծի
ալ մեծ ցաւ ցտուաւ , ու քեզի հետ
ես ալ ան կողրամ : Թէպէտ զնաց
բայց առաքինութիւններն ու բարի
ընկերները քեզի ձգեց որոնք անկո-
րուստ դանձեր են : Եւ որովհետեւ
միշտ զգաստ կեանք , անստգիւտ
վարք մը ու ի վախճանի բարի մահ
մ'ալ ունեցաւ . ստոնք ալ ճշմարիտ
միտիթ արութիւններ են : Աստուծմէ
կը խնդրեմ որ՝ դուն ալ անոր ալս
միշտ բարեզործութեան մէջ գտնուիս :

Նս աղէկ գիտեմ թէ արժանաւորութեան մասին հօրմէդ պակաս չես . քեզի պակասածը միայն անոր տարիքն է , անոր երկար կեանքը կը մաղթեմ , կուրախանամ ևս որ դուն ինչ որ հօրդ քով տեսած էիր ու կորուսիր՝ զաւկներդ զանոնք թու վրադ արդէն կը տեսնեն . Աղջ եզիր :



ԽԵ. ՆԱՄԱԿ

Կնկան մը որուն կրիկը մեռած է

Տիկին .


Ան անձը զոր կորսնցուցինք , բարեկամս էր . անոր բարեկամութեանը փորձերը՝ ժամանակ ժամանակ ինձի ըրած բարերարութիւններէն յայտնի տեսած էի . ուրեմն ի՞նչպէս ես աչ չլամ : Նթէ ցաւս քիչ մը թեթեւեւեւութեան մը կայ՝ անոր առաքինութիւնս .

ներուն յիշատակն ու Աստուծոյ ար-
դարութեանը վրայ ունեցած յոյսն է .
և անհնարին է որ առաքինիներուն
պահուած երջանկութիւնը՝ հիմայ ան
չվայելէ : Եւ արդարեւ ան շնորհքին
ալ անկէ աւելի ով իրաւունք ունի :
Ասոր ճշմարիտ ըլլալը՝ ուրիշներէ ա-
ւելի դուն քաջ գիտես . քանզի շատ
ժամանակէ ի վեր անոր ըրած զործ-
քերը կը տեսնէիր : Քանի ասոնք խոր-
հելով քիչ մը մխիթարուինք , ու մեզ
Արարչին կամացը յանձնենք , մեզի
ասանկ մեծ կսկիծ մը տրուած ա-
տեննն ալ մենք ան սիրով պաշտելու
պարտաւոր ենք : Աս կսկիծները՝ ու-
րոնք մեր կենաց ընթացքը զգալի
կերպով կը փոփոխեն , մեզի մեծ մեծ
խրատներ են . ասոնցմով կը սորվինք
չվախնալ ան օրհասական ժամէն , որ
օր մը մեզ պիտի գայ կոխէ , ու մեզ
աս պանդխտութեան աշխարհէն պիտի

հանէ : Աս մեր կորսնցուցած սիրելի
անձը , կրկին պիտի օրհնենք , և
Աստուած աս յոյսն իր բանաւոր ա-
րարածին այսինքն մարդուս տուաւ :
Սա ալ խորհելու ես , որ միայն Քրիստոս
տոնէական սրբազան պարտաւորու-
թիւնները չեն որ քեզ քաջութեամբ
աս ցաւերուն համբերելու կը սլար-
տաւորեն , այլ անձիդ պահպանու-
թեանը համար ալ ասոր պիտի ջա-
նաս . զաւակներդ քենէ ուրիշ մէկը
չունին , դուն ալ ինքզինքդ անոնց
տալու պարտիս : Ան մատաղ տուն-
կերը մշակէ՛ . քեզի պէս առաքինի
սիրտ ունեցողի մը՝ ասկէ գեղեցիկ ու
ասկէ քաղցր մխիթարութիւն մը չի
կրնար ըլլալ : Անոնք քեզի՝ իրենց
հայրն ամենեւին մտքէ չհանելու յիշա-
տակներ պիտի ըլլան , և թէպէտ ա-
սոր համար միշտ ցաւերդ պիտի նո-
րոգուին , բայց ան ցաւերը քեզի վը-

նաս մը չընելէ դատ , մեծ օգուտ ալ
կրնան ունենալ : Եւ քու պատուա-
կան ամուսնոյդ բարեկամն էի . եթէ
կարելի ըլլար կեանքս անոր փոխա-
նակ կուտայի . հաճէ՛ ուրեմն, Տիկին ,
որ նոյն զգացումը քեզի ու քու դաւ-
կընէրուդ վրայ ալ ունենամ :

* * *



ԽՁ. ՆԱՄԱԿ


Պատասխան

Յարգոյ Բարեկամ .

Նամակդ ինձի հասած ժամանակը՝
եթէ մխիթարուելու վիճակի մէջ ըլ-
լայի , անշուշտ անով պիտի մխիթար-
ուէի . բայց անիկա՛ ինձի նոր ար-
ցունքներ թափել տուաւ , ու զիտ
բնաւ շիրցաւ սփոփել : Իմ թշուառ
տանս վրայ զցուցած բարեկամու-
թեանդ համար որչափ ուրախանալա՛

չեմ կրնար քեզի բացատրել: Մեծ տա-
պէս շնորհակալ եմ, և ինչպէս որ
սիրելի տէրս քեզ մասնաւոր կերպով
մը կը յարգէր՝ ասանկ ալ ես ըստ
կարի զաւկներուս պիտի սորվեցնեմ
որ նոյն կերպով՝ հօրերնուն այս պարս-
տաւորութիւնը չի մոռնան:

Ողջ եղի՛ր: * * *



ԽԷ. ՆԱՄԱԿ

Հիւանդ մը մխիթարելու համար
Բարեկամ.

Քու հիւանդութեանդ լուրն ինծի
մեծ ցաւ տուաւ, քանզի դորժքերուս
պատճառաւ հոս գերւոյ սլէս արգիլ-
ուած ըլլալու համար չեմ կրնար գալ
որ ցաւս քեզի անձամբ իմացնեմ. ա-
սով թերևս քիչ մը կը սփոփուէիր:
Կաղաչեմ, սիրելիս, սաէպ գրելով

առողջութեանդ վիճակը ինծի իմացուր, որ գոնէ քիչ մը հանգստանամ: Եկածը դարուն է, անշուշտ օգերը քեզի պիտի օգնեն. և կը յուսամ թէ քիչ ժամանակի մէջ աղէկ պիտի ըլլաս: Ողջ եղիր:



ԽԸ. ՆԱՄԱԿ

Պատասխան

Անկեղծ բարեկամ.

Հիւանդութեանս համար ունեցած ցաւդ ինծի կը յայտնես. շատ շնորհակալ եմ. ու ինչպէս կըսես, հիւանդութիւնս ալ սկսաւ կամաց կամաց տկարանալ: Կարծես թէ օգն՝ օրէ օր մեղմանալով առողջութեանս կօզնէ. բայց տակաւին շատ տկար եմ. ուստի ներէ որ ասկէ աւելի երկար չեմ կրնար գրել: Ողջ եղիր:


ԽԹ. ՆԱՄՍԿ

Ձախորդութեան հանդիպող մեկուն
Բարեկամ.

Քեզի պատահած ձախորդութիւնը
եթէ իմ գլուխս եկած ըլլար, աւելի
ցաւ չէի կրնար զգալ քան զոր հիմայ
կ'զգամ: Բայց աղէի գիտեմ որ ա-
սանկ ձախորդութիւններու համար
կը վշտանաս, ոչ թէ շահերուդ վնաս
տալուն, (թէ և արդարեւ աս կողմանէ
կրած վնասներդ մեծ են), այլ ա-
նոնց պատճառած սքտի անհանգըս-
տութեանը համար. և իրաւունք ու-
նիս: Ամենքս ալ բախտին հարկատու
կը ծնինք, և ով որ աս պարտքը ժամ
մ'առաջ վճարէ, ամենէն երջանիկն
է: Յոյս ունիմ որ ալ մենք ազատե-
ցանք, ու ասկէ ետքն աւելի երջա-
նիկ պիտի ըլլանք: Եթէ Աստուած
ուզածներս կատարելու ըլլայ, ան-

չուլտ քու ձեռնարկութիւններդ այ-
սուհեաւ աւելի յաջող պիտի ըլլան ։
Ողջ եղիր ։

• • •



Ծ. ՆԱՄԱԿ

Պատասխան


Բարեկամ .

Բարեկամութեան մէջ անկեղծ ցաւ
ւակցութենէ աւելի քաղցր բան չկայ .
և անոր մեծ փորձն ալ, մեր սիրե-
լիներուն ձախորդութեանը մասնակից
ըլլալն է ։ Իմ անյաջողութիւններուս
վրայ ցցուցած կսկիծդ՝ իմ կսկիծնե-
րուս կէսը թեթեցուց , միւս կէսն ալ
համբերութեամբ տանելու ինծի մեծ-
օգնութիւն տուաւ ։ Ողջ եղիր ։


• • •



5. ԹՈՒՂԹԻՔ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԵԱՆ



ԳԻՏԵԼԻՔ



Աս տեսակ թղթերու մէջ յատուկ խոհեմութիւն ու շափաւորութիւն պէտք է : Եթէ կրիւք և վրէժխնդրութեան հոգւով, որպէս թէ ռիսանելու համար դրենք, շատ անգամ նամակն ընդունողին հետ այլ ևս չը հաշտուելու պայմանով կաւրուինք : Խօսակցութեան մէջ աւելի կամ պակաս խօսիլն այնչափ վնաս չընէր, քանզի կը մոռցուի . շատ անգամ ալ դեռ իրարմէ չղատուած կը հաշտուինք . Բայց դրուածը չի մոռցուիր, մարդուս սրտին աւելի կազդէ, կրկին կրկին կրնայ կարգացուիլ, ու կերպ կերպ մեկնութիւններ տրուելով սրտի կըս-

կիծը կը նորոգէ : Աւստի ասանկ նա-
մակ մը գրելու ժամանակ նախ գրած-
նուս վրայ խորհելու ենք ու օր մը
ետքը ձգելը միշտ լաւագոյն է : Բեր-
նին եկածն անխորհրդաբար գրելուն
մէկ փաստն ալ աս է որ դիմացինին
ալ իր ուղածն ըսելու իրաւունք կու
տայ . և ասանկով շատ անգամ մեր
սիրտն՝ անկէ աւելի կը կսկծէ :

Տեսակ մը յանդիմանութիւն ալ կայ
որ այնչափ խոհեմութիւն չուզեր .
բայց անիկայ միայն բարեկամի կրնայ
ըլլալ . երբ կը տեսնենք թէ մեզ մոռ-
նալու պէս կընէ , նամակ չի դրեր ,
կամ ձանձրութիւն տալէ վախնալով
լուռ կը կենայ , ան ատեն թեթեւ
կերպով մը կրնանք յանդիմանել , քիչ
մը նեղանալ ցուցնելով . բայց ասոնց
ամենն ալ վայելչութեամբ , խենդն
ի խենդը ընելու չէ : Ճշմարտութիւնը
զուարճացնելու և ծիծաղական կեր-

սլով ըսելու է, որ դիմացինը չի վըշտանայ՝ և նամակն ալ իր արդիւնքն ունենայ :



ԾԱ. ՆԱՄԱԿ

Երկար ժամանակ գիր չգրող
բարեկամի

Բարեկամ.

Եթէ քեզ ադ սիրելի ծուլութեանէդ հանելու միջոց մը գտնէի, գիտե՞ս արդեօք թէ ո՞րչափ յանդիմանութիւններ պիտի գրէի : Այսքան ժամանակ թուղթ մը չգրելէդ ետքը, եթէ բոլորովին աւրուիմ, տեղը չէ՞ : Ես քու բնութիւնդ այնչափ աղէկ հասկցած եմ որ առանց խաբուելու կրնամ գրաւ բռնել՝ թէ ինծի գիր չգրելուդ որչափ ատեն ըլլալն ալ չես գիտեր : Ուստի ես քեզի օգնեմ. երկու ամսէ աւելի է որ թուղթ գրած

չես . աս քեզ անշուշտ պիտի զարմա-
ցընէ : Ուրեմն պատճառանքներ գըտ-
նելու նայէ , քանզի կարօտ ես . և
նայէ որ պատճառներդ ալ իրաւացի
ըլլան , որ իս մոռցած ըլլալդ յայտնի
չըլլայ : Սուրհանդակները կանոնաւոր
կերպով շեն երթար գար կըսես . ա-
տոնք հին պատճառներ են . հիւանդ-
էի ըսէ , կամ շիտակը խոստովանելով՝
գրելու հեղգացայ , բայց քեզ միտքէս
հանած չեմ ըսէ : Երկան շընեմ , թէև
պիտի ամէնաս , սակայն պէտք է որ
պատասխան մը գրես . ու վերջին
նամակը գրած օրէդ սկսելով ամեն
մէկ օրուան համար՝ մէյմէկ տող բան
պիտի պահանջէի , բայց մեզք ես ,
բարեկամութեանս երեսէն այնչափ
ներշու թիւն մի՛ կրեր : Ընտանիքս ողջ
առողջ է , քեզի բարև կընեն :

Ողջ եղիր :

ՄԲ. ՆԱՄԱԿ


Պատասխան

Ազնիւ Բարեկամ.

Աղէկ աղէկ, սրդողէ սրդողածիդ չտփ. եթէ աւելի բարկանաս, աւելի շնորհակալ կըլլամ. առտնք՝ սիրելէ ու վրաս հոգ տանելէ յառաջ կուգան. եթէ ադ համարձակ բարեկամութիւնը շունենայիր, իս արդարացընելու պատճառ մը պիտի փնտաէի. բայց փառք Աստուծոյ անկէ ալ ազատ եմ: Ես ծոյլ եմ, անանկ չէ՞. աղէկ, թող ծոյլ ըլլամ. դաւն գիտես որ ծոյլերն ամենէն աւելի երազ կը տեսնեն. ես ալ շատ տեսայ, ինքզինքս ընտանեացդ մէջ կը կարծէի: Կը յուսամ որ չես երկմտիր՝ ու կը հաւատաս որ, եթէ քեզի օգտակար ըլլալու դիպուած մը պատահէր, նամակ գրելու մէջ ըրածիս պէս չէի ը-

ներ, ժրութիւնը ձեռք կառնէի և
ինչ շատ բարեւ ըրէ ընտանեացդ, ու
ողջ եղիք:

* * *



ԾԳ. ՆԱՄԱԿ


Նոյն նիւթին վրայ ազգակահի

Սիրելի բարեկամ.

Եթէ քեզի նունեցած սէրս Զաստիկ
չըլար, կոտտանդնուպօլսէն մեկնելէս
ի վեր աս վեց ամսուան մէջ գիր մը
չգրելուդ համար, քեզի երկար յան-
դիմանութիւններ կը գրէի: Բայց
գիտնալով որ դուն ազգականութեան
ու բարեկամութեան պարտաւորու-
թիւնները, մտնաւանդ դէպ ի քեզ,
աղէկ կը ճանչնաս, անոր համար անոնց
կատարմանը մէջ թերութիւն
ցուցնելդ, քեզի յանցանք չեմ կըր-
նար համարիլ: Ասոնք խորհելով ա-

ուողջութեանդ. համար սիրտս ահու
գողի մէջ է : Ուստի կաղտոյեմ, երկու
տող գրով իս աս անհանդատութենէն
ազատէ : Ողջ եղիր :

• • •



ՄԴ. ՆԱՄԱԿ

Երկար ժամանակ հեռուն ըլլալէն
էտքք Եկած ժամանակն ալ քովեր-
նիս շատ ջկեցող բարեկամի մը

Բարեկամ :

Քովս այնչափ քիչ կեցար՝ որ քեզ
յանդ իմանելու թամանակ չգտայ :
Երեք տարի ինէ զատուելէդ ետքը՝
երեք վայրկեանի չափ ալ քովս չկե-
նալ ի՞նչ ըսել է : Ձէ ասիկայ նե-
րելու բան չէ . ասոր վրէժը նոյն իսկ
բարեկամութեան կը յանձնեմ՝ որ
անշուշտ քեզ պիտի սլատօ՛ւ : Որչափ

կրնաս քեզ արդարացուր . խիղճդ
քեզ շատ պիտի շարձարէ , աղէկ գի-
տեմ . հիմայ ալ ասով կը մխիթար-
ուիմ : Այսուհետև գնա ինչպէս որ
կուզես այնպէս ըրէ . բայց օր պիտի
գայ որ աս մեծ յանցանքը խոստովա-
նելու պիտի ստիպուիս քանզի պար-
տաւորութիւնդ է : Ողջ եղիր :

* * *

ՄԵ. ՆԱՄԱԿ

Երկար ժամանակի բուրք ջգրող
հօր մը

Աիրելի և պատուական հայրս :

Քու աս լռութիւնդ ինչ շատ կը
վախցնէ : Հիւա՞նդ ես արդեօք . կամ
անանկ մեծ ձախորդութեա՞ն մը հան-
դիպեցար՝ որ վայրկեան մը անգամ
զաւակդ շես կրնար յիշել : Արդեօք
քեզ ակամայ նեղացուցած եմ : Ան-

Հոգութիւն կընես , չեմ կրնար ըսել ,
քանզի զաւկներուդ վրայ որչափ սէր
ունենալդ՝ շատ փորձերով տեսած
եմ : Աաղաչեմ , Հայր , իս աս դառն
մտատանջութենէն ազտտէ , եթէ
յանցածք ալ ունիմ ներէ :

Ողջ եղիք : * * *

ԾԶ. ՆԱՄԱԿ


ՅԻՆՃՆՈՒՄԸ զՈՐԾՆ ԷՍ ՃԳՈՂ ԱՅԿՈՒՆ

Բարեկամ .

Քենէ բողոք ըրած ատենս ալ քեզ
սերտ սիրով կը սիրեմ ըսել՝ բաւա-
կան չէ , մեր խօսքին գանք : Քեզի
դործ մը յանձնելու համարձակեցայ ,
դու ալ սովորական քաղաքավարու-
թեամբդ՝ կատարելու խօսք տուիր ,
ես հաւատացի : դործն ալ ինծի հա-
մար շատ կարևոր էր : Բայց չեմ գի-

տեր , արդեօք խոստումդ բոլորովին
մոռցա՛ր ըսեմ : Եթէ ըսեմ՝ վերջը
գէշ պիտի ըլլայ : Վախճամ թէ գործ-
քերուս ետ մնալուն համար մնաս
կրե՛լք ետքը , բարեկամութիւնդ ալ
կորսնցնեմ՝ որ ինձի այնպէս սլատ-
ուական է : Քիտցած ըլլաս՝ որ աս
գործը քեւ ալ միտքէս հանեցի , և
կուղեմ որ դուն ալ մոռնաս : Աղէկ
գիտեմ՝ որ հիմայ ինձի թուղթ գրելու
չես համարձակիր . բայց հանդարտ
եղիր , ու գիտցիր որ պատերազմ չե-
ղած խաղաղութիւն եղաւ : Ուրեմն
թող ամեն բան իր առջի վիճակը
գտնէ . միայն քեզի այսուհետեւ ալ
դործ չյանձնեմ : Ողջ եղիր :

* * *



ԾԻ. ՆԱՄԱԿ

Անհոգ բարեկամի

Սիրելիս .

Այսուհետև մի՛ պարծենար թէ
բարեկամութեան աղէկը ես գիտեմ :
Վեց ամիս է որ քեզի նամակ մը գրե-
ցի , անկէ ի վեր ալ անկողինը հի-
ւսնդ պառկած եմ , ու քենէ երկու
տող գիր մը չկրցայ ընդունիլ : Աղէկ
հասկըցայ որ՝ եթէ մեռնիմ ու քանի
մը տարի ալ անցնի : տակաւին հոգ
պիտի չընես : Աս մասին զգոյշ եղի՛ր
քանզի աս գիտուածը հնարաւոր

Ողջ եղի՛ր ,

* * *



Յ. ԹՈՒՂԹՔ ԱՆՁԻՆ ԱՆՄԵՂԱԴ-
ՐՈՒԹԵԱՆ

ԳԻՏԵԼԻՔ

Յանցանքի մը տէր համարուելն
ետքը, մեզ արդարացնելու յատուկ
կերպ մը չկայ. դիպուածին պարա-
գաներուն նայելու է: Բայց ինչպէս
գրուի՝ Թող գրուի, դիտաւորապէս
նայելու է որ, չկարծուի թէ գըր-
ուածը բռնի դրուած է, ոչ թէ մեր
կամքը: Եթէ գրածս՝ իրենց յան-
ցանքը չազհող ու այլ համարձակ խոս-
տովանողներուն համար միայն ըլլար,
կրնէի թէ յանցանք ունենալը խոստո-
վանի, արդարանալու համար տնկէ
աղէկ ճամբայ չի կրնար ըլլար: Բայց
ընդհանրապէս մարդիկ աս պատուէ.

րին դիւրաւ չեն կրնալ անսալ . և որչափ յանցանք ունենան , միշտ կը նային որ պատճառանքներ գտնեն . մանաւանդ երբ ուրիշ ներում ուզելու կըստիպուին : Ուրեմն նայելու է որ՝ վարպետութիւն բանեցնենք , և աւելի շնեղացնենք ան՝ որուն սիրտըն առնել կուզենք . պակասաւոր գտնուելնուս համար միշտ , և պակասութեան տեղը լեցնելու ալ յօժարութիւն մը ցցունենք : Եթէ յանցանքը պզտիկ բան է , դրուածը պարզ ու զուարթ կերպով մը ըլլայ , մնասջունի . բայց խեղկատակութեան զարնելու չէ , ինչու որ դիմացինին սիրտըն առնելու տեղ՝ աւելի կը զայրացնենք :



Մեկուսն սիրտն առնելու համար


Տէր .

Սրտիս խռոված ատենը՝ քեզ նեղացուցի : Բուռն կիրքով մը վառուած ատեն՝ մեր բերնէն ելածին տէրը չենք . ասիկայ հիմայ համարձակ կըսեմ, քանզի բարկութեան ծուխերը միտքիս մէջէն դուրս ցնդեցան : Քու բարեկամութիւնդ իմ քովս այնչափ անգին է, որ անիկայ չկորսնցնելու համար, անիրաւ ու վատ ամօթը մը տիկ չեմ ըներ, որ ընգհանրասլէս մեր յանցանքներուն ներում գտնելու արդեւք կըլայ : Ես պարտքս կատարեցի, քու բարի սիրտդ ալ ճանչնալով՝ կը յուսամ որ կը ներես, և կըրնայ ըլլալ՝ որ նամակս չկարդացած՝ մեր մէջ եղածներն արդէն մոռցած

ըլլաս : Ներէ որ առաջուան սէս քու
բարեկամութեամբդ սլարծիմ :

Ողջ եղիր :

* * *



ԾԹ. ՆԱՄԱԿ

Պատասխան

Սիրելի բարեկամ .

Քու ազնիւ համարձակութիւնդ
տեսնողը՝ որչափ բարկացած ըլլայ ,
կը հաշտուի : Կան մարդիկ որ կիրք
կելեն , բայց կիրքը հանդարտելուն
սէս՝ կը ստրջանան . ան տեսակ մար-
դերէն մէկն ալ ես եմ : Քու բնաւո-
րութիւնդ նկատելով՝ որ եթէ դըժ-
բախտութեամբ ես քեզ վշտացուցած
ըլլայի , աւելի շուտով ինծի սլիտի
ներէիր , ահա ես ալ քու կիներ բոլո-
րովին մոռցայ : Ողջ եղիր :

* * *

— — —

Կ. ՆԱՄԱԿ

Պաշտպանի մը որուն երկար ժամանակ թուրք զորունս ջե

Տէր .

Այսքան ժամանակ ձեզի թուրք չգրելուս ներում ընդունելու համար, պէտք է որ ձեր բարութեանը վստահիմ: Դուք ինձի որչափ յանդիմանութիւն ընէք, սրտիս ինձի ըրածներուն չափ ծանր շեն կրնար ըլլալ, որ խիստ դատար որի մը պէս՝ արդէն զիս օղէկ պատժեց: Եթէ յանցանքս խոստովանելով կրնամ թեթեւցնել, ասանկ պզտիկ ապաշխարանքով կէս մը թողութիւն գտնելու կարող ըլլալուս համար, իս շատ անտաւոր պիտի համարիմ: Բայց կը վախնամ՝ չըլլայ որ կարծէք թէ ձեր սովորական ներողամտութեանը վստահելով, կըրին և կըկին յանցանքներ պիտի գոր-

ծեմ, խորհելով թէ՛ եթէ նոր յան-
ցանք մ'ալ ընելու ըլլամ, նորէն կը
խոստովանիմ ու թողութիւն կը գըրա-
նեմ: Չէ տէր՝ ադ ամենեւին միտքէս
չանցնիր, ու մանաւանդ կուզեմ որ,
եթէ մէյմ'ալ ձեր բարեսրտութեան
յարգը չճանչնալով՝ կրկին անգամ
ձեզ մոռնամ ու վշտացնեմ, խստու-
թիւնը ձեռք առնէք: Մոռնալ ըսե-
լով առ երևոյթ մոռացութիւն կիմա-
նամ, ինչու որ՝ եթէ ձեր ցանկալի
յիշատակը մտքէս կորսնցնելու չափ
մոռնալ մ'ըլլայ, իրաւ անարժան կըլ-
լամ որ իս ձեր միտքը բերէք, և ինք-
զինքս անհոգ կարծած ատենս՝ ճըշ-
մարիտ ապերախտ մը եզած կըլլամ:
Չեմ գիտեր, արդեօք պիտի ըլլա՞յ
որ ձեր վտքը մէկ թուղթը ձեռքս
անցնի, ու ես ալ խղճիս աս ծանր
բեռէն ազատած ըլլալս իմանամ: Մին-
չեւ որ չառնեմ, պիտի շիրնամ հան-

գըստանալ, և եթէ անարժանութեանս համեմատ իս պատժել ուզէք, ձեր ձեռքն է, աս տանջանքս կրնան երկարել: Ողջ եղիք:

ԿԱ. ՆԱՄԱԿ

Հիւանդութեան պատճառաւ թուղբ գրել ջկրցող մեկը իր բարեկամին

Յարգոյ բարեկամ.


Կարծեմ իս մեռած համարած էք. քիչ մնաց որ ես ալ զիս անանկ պիտի համարէի, քանզի քանի որ կը մտածեմ թէ հիւանդութեանս պատճառաւ ձեզի հետ թղթակցութիւնս կտրեցաւ՝ անմիջասլէս կը կարծեմ նաև որ կեանքս ալ կտրեցաւ: Այո՛, բարեկամ. հիւանդութենէ ուրիշ բան չէր կրնար ինձ աս սրբազան պարտաւորութիւնը՝ վճարելու արդելք ըլ-

լալ, որ միշտ հանութեամբ կը կատարեմ: Ահա հիմայ նորէն կեանք տանելու կսկսիմ. և այս անգամ, անօգուտ տեղը աշխարհ գարձած չըլլալու համար, ձենէ իմանալ կուզեմ թէ. դուք անիկայ ի՞նչպէս կանցընէք: Ահա հիւանդի այսչափ գրելը բաւական է: Ողջ եղիք:

* * *



7. ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹԵՐՈՒ ՎՐԱՅ
ԹՂԹԵՐ ԶԱԻԿԷ ՄԸ ԻՐԵՆ ԾՆՈՂԱՅԸ
ՈՒ ՄԵԾԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ




Գ Ի Տ Ե Լ Ի Ք



Աս տեսակ թուղթերը գլխաւորապէս սիրով ու յարգանօք գրուած պիտի ըլլան. ծնողաց ու մեծերու

գրուածք՝ հարկաւ բարեկամի մը կամ
հաւասարի մը գրուածին պէս՝ հա-
մարձակ չի կրնար ըլլալ : Անոնց բա-
րութեանը վստահելով՝ եթէ շատ խո-
նարհական կերպով չգրուի, գոնէ
չափաւորութեամբ ու զգուշութեամբ
գրել հարկ է . այնպէս որ մեր անոնց
յարգութիւնն ու պատիւ ընելը, մեր
գրուածներուն մէջ յայտնի ըլլայ :
Ըսենք թէ սխալ մը ըրած են, զոր
անպատճառ անոնց իմացնել պէտք է,
անանկ փափուկ կերպով մը ընելու
է, որ իմանան թէ ակամայ իմացը-
նելու պարտաւոր եղած ենք : Ընդ-
հանրապէս խօսելով, մարդ աւելի
սրտով զգացածը գրելու է, քան թէ
մտքով խորհածք . և տա որչափ որ
հարկաւոր է, այնչափ դժուար չէ .
սէր ունեցիր, այնուհետեւ անիկայ
իմացունելը դժուարին չէ :



ԿՖ. ՆԱՄԱԿ

Տղայ մը կաղանդի օրը իբ ծնողացը
կը գրէ

Սիրելի և բարի ծնողքս .

Աս ցանկալի օրերուն մօտենալն իս
չատ կուրախացնէ . քանզի աս օրերը
սրտիս մէջ եղածները ձեզի նորէն
խմացնելու աղէկ պոխթ են , ինչպէս
որ ասկէ առաջ ալ շատ անդամ եղած
են : Աս գործն ինձի ոչ միայն պարտք ,
այլ մանաւանդ հոգեկան զուարճու-
թիւն մը է որ զիս կը բերկրեցնէ :
Այո՛ , սիրելի ծնողք , ձեզ սրտանց կը
սիրեմ , ու ամեն բանէ աւելի ձեր
երջանիութեանը կը ցանկամս :

Ձեմ կրնար ըսել թէ անցած տար-
ուան մէջ , շատ աղէկ կերպով վար-
ուեցայ . ան օրերս՝ ուզածիս սէս
ձեր գովութեանը արժանի ըլլալու
կերպով շանցուցի . բայց կաղաչեմ ,

հաւատացէք որ աս նոր տարւոյս մէջ,
վարքս աւելի շտկելու առաջադրու-
թիւն ունիմ: Եթէ ձեր բոլորովին
ինչ դժգոհ չըլլալն իմացնէք, ինծի
շատ մեծ ընծայ մը զրկած կըլլաք:
Ուստի մեծ անհամբերութեամբ ազ-
լուրը կըսպասեմ, ու կը վախնամ,
որ չըլլայ թէ ձեր աչուրներուն առ-
ջին անարժան մէկը համարուիմ, ու
ձեր օրհնութենէն զրկուիմ:

Ողջ եղիք:

* * *



ԿԳ. ՆԱՄԱԿ

Նոյն նիւքին վրայ ազգականի մը

Ցանկալիք լւմ.

Աս նամակը ձեզի դրողն աս տարի
ես եմ. գիտեմ որ սուանկ դիպուածի
մէջ, ամեն ընծայէ աւելի ձեռքիս
դիրք ձեզի ընդունելի է, անոր հա-

մար ես անձամբ գրեցի • քանզի ամեն
բարեմազթու թենէ աւելի , աս փոք-
րիկ յառաջադիմութիւնս ձեզ աւելի
կուրախացնէ : Միայն այս ալ գիտ-
ցէք որ , ձեր կենացն ու երջանկու-
թեանը համար՝ Աստուծոյ աղօթքը ը-
նելէ գաղարած չեմ : Ես միշտ խե-
լօք ըլլալու կը ջանամ , դուք ալ իս
սիրելէ մի գաղրիք : Ողջ եղիք :

* * *




ԿԴ. ՆԱՄԱԿ

Նոյն նիւթին վրայ բարերարի
կամ անոր տեղը բռնող սգգականի

Տէր •

Արարիչը մէկ կողմանէ ժամանակը
փախցնելով , միւս կողմանէ ալ նոր
տարի բերելով՝ միտքս կը բերէ ձեզ՝
որ երկրի վրայ անոր բարերարու •

Թեանը մէկ կենդանի պատկերն էք .
և ինձի պատեհութիւն կուտայ՝ որ
սրտիս մէջ ամեն օրուան ըրած գաղտ-
նի փափաքներս՝ ձեզի ալ իմացնեմ :
Մինչև սա օրս ձեր ինձի ըրած բա-
րերարութիւններուն ըրած փոխա-
րէնս միայն բազմանքներ են . որոնք
թէև ձեր մեծանձնութեանը հաւա-
սարեւո չափ անկեղծ են՝ սակայն
ձեր բարերարութեանը չափ արդիւ-
նաւոր չեն՝ որ միշտ կը վայելեմ : Ա-
սոնք միշտ խորհելով աղէկ կը հաս-
կընամ որ ձեք ինձի ըրածներուն շատ
անարժան եմ : Բայց կաղաչեմ , հա-
ւաստացէք որ երախտագիտութիւնս
ձեզի որչափ անպտուղ ալ է , գէթ
պակսելիք շունի , ու մինչև որ շմեռ-
նիմ , չլմննար : Ողջ եղիք :




Տղայ մը հօրը անուան օրը

Յարգոյ Հայր .

Ձեռնէ հեռու ըլլալս ինծի միշտ ցաւ է , մանաւանդ այսօր որ ձեր քով չգտնուելով , սրախ անկեզժ բաղձանքները ձեզի յայտնելու , և ձեր ցանկալի օրհնութիւնն առնելու կարող չեմ : Սովորութիւն եղած քաղաքավարական խօսքերն ալ ձեզի չընեմ , դուցէ կեղծաւորութեան կասկած աամ . ազէկ դիտէք թէ ձեզ որչափ կը սիրեմ ու կը յարգեմ . ուրեմն ինչ խօսք կրնամ ըսել որ դորձքերէս աւելի ձեզ աս մասին սպասեցով ընէ : Եթէ դժբաղդ ութեամբ , ձեզ վշտացուցած ըլլայի , ձեռնէ թողութիւն առնելու համար անօգուտ խօսքեր չի փնտռեր , այլ աւելի վարքս կը շտկէի : Նմանապէս սիրս ձեզի հաւ-

տացնելու համար ալ այնպէս կընեմ,
գործքերովս կը ջանամ ձեզի յայտնել:
Այս օրուան պարագան այս յայտա-
րարութիւնն ընելու ինծի առիթ աը-
ուաւ: Աստուած տար որ երկար
ժամանակ ասանկ յայտարարութիւն-
ներ ընելու պատեհութիւն ունենայի:
Ողջ եղիր:

* * *



ԿԶ. ՆԱՄԱԿ

Տունեն նոր գատոնսդ աղջիկ մը
իր մօքը

Գթած մայրս .

Թէպէտ դիտէի թէ՛ քեռէ պիտի
գատուիմ, բայց գատուելէս ետքը
տակաւ ին այնպէս ցաւ զգացի, որ
պէս թէ բնաւ դիտցած չըլլայի: Ո՞րն
է աս կեանքին երջանկութիւնը:
Քանի որ երջանկութիւնը մեր ձեռքը

չէ, ի՞նչպէս կրնանք մեզի համար
հաստատել : Ար տեսնեմ որ աշխարհիս
մէջ անմեղ ուրախութեան ցանկալն
ալ շատ անգամ մեծ վտանգներ ու-
նի : Քանի մը օր, քու քովդ եղած
ատենս ունեցած ուրախութիւններուս
մնասը՝ կենացս օրերուն մէջ պիտի
քաշեմ :

Քեզ ամեն տեղ պիտի մնտուեմ,
պիտի ուզեմ, բայց պիտի չկրնամ
դտնել : Ո՛հ, սիրելի մայր, գոնէ
թղթերովդ աս վիշտս՝ քիչ մը թե-
թեցնելու ջանա, քու վրադ ստէպ
ստէպ լուր տուր, քանզի առանց ա-
նոնց չեմ կրնար ըլլալ • Ողջ եղիր :

* * *



ԿԷ. ՆԱՄԱԿ

Տղայ մը մօրը մահուանը վրայ
իր հօրը

Սիրելի Հայրս •

Որչափ թշուառ եմք, անտակ մէկը
կորուսինք, որ աշխարհի մէջ ամենէն
աւելի մեզ կը սիրէր: Ինծի համար
այնչափ նեղութիւններ քաշողն՝ ալ
պիտի չկրնամ տեսնել: Քու սրտիդ
ցաւէն խնայ ալ կրնաս հասկնալ: Ոհ
ինչո՛ւ համար աս դառն արցունքները
հիմայ քու քովդ չեմ կրնար թափել •
քու քովդ կըսեմ, քանզի դուն մի-
նակ ինծի ապաւէն մեացիր, և քեզ-
մով է միայն որ քիչ մը սիրտս կը հան-
դըստանայ: Հիմայ ըսնով մը միայն
քիչ մը ինքզինքս կրնամ մխիթարել,
և աս է որ գիտեմ թէ մայրս իր այն-
չափ առաքինութիւններուն արժան

եղած փոխարէնն արդէն առած է .
և եթէ օր մը աս աշխարհիս սահման-
ներէն զատուելու ըլլամ, ես ալ թե-
րևս անոր քով Ամենակարողին զիրկը
նստելու արժանի կրնամ ըլլալ, որն
որ արդարներուն հոգին իրենց հո-
ղեղէն մարմինէն՝ միայն անվախճան
փառօք պատկելու համար կը բաժնէ :
Այո՛, սիրելի և պատուահան հայր,
օր պիտի գայ որ մենք ան պատուա-
կան կնկանը հետ մէկտեղ պիտի ըլ-
լանք, և ան ատեն մեր աս կսկիծ-
ները խնդութեան պիտի փոխուին :

Եթէ քու սիրտդ նորէն կը կսկըծ-
ցունեմ, ու քեզի նոր արցունքներ
թափել կուտամ, ներէ, հայր, կա-
ղաչեմ, ներէ ինձի : Քեզ միտթարել
կուզեմ, բայց կսկիծս քեզի չեմ կըր-
նար հասկցնել : Ինձի ունեցած սիրոյդ
վրայ մօրս սէրն ալ աւելցուր, ես ալ
ձեռքէս եկածին չափ պիտի ջանամ,

որ իմ որդիական սիրովս ու յարգաս
նօքս քու կսկիծդ թեթևցնեմ :

Ողջ եղիք :

* * *



ԿԸ. ՆԱՄԱԿ

Հեռու տեղ մը ուսման գացող
տղայ մը իր ծնողներուն

Սիրելի և սպասուական ծնողք .

Ահա վերջապէս ձեզ պիտի տես
նեմ : Ան երջանիկ վայրկենին հաս
նելու համար անցնելիք ժամանակս ,
ոհ , ո՞րչափ երկար կուգայ ինձի :
Տարուան մը աշխատութեանս փոխա
րէնը՞ պիտի առնեմ , ձեզ պիտի տես
նեմ , ու ձեր սէրը պիտի վայելեմ :
Ըրած շահս որչափ դոյզն ըլլայ , հի
մայ ինձի պարծիլ մը կուգայ . և ուս
ման ատենը կրած դժուարութիւն
ներս բոլորովին մոռնալով , ձեր յոյսը

ունայն չհանելուս ուրախութենէն
ուրիշ բան չեմ գտար : Այսուհետե
ալ ձեզի մօտ ձեր առաքինութիւնները
պիտի սորվիմ, որոնք ձեր յրինակ-
ներովն ինձի աւելի գեղեցիկ պիտի
երևան : Անոնք չէ թէ ձեր սիրոյն
համար պիտի սորվիմ, այլ քանզի ա-
ռաքինութիւնը բուն ես ալ կը սի-
րեմ, և ձեզի նմանելով աւելի բարի
և աւելի ուրախ կըլլամ : Ողջ եղիք :

* * *



ԿԹ. ՆԱՄԱԿ


Խնամակալութի

Պատուական տէր .

Հօրս պէս ընտիր անձի մը կորըս-
տեանը վրայ մխիթարուելու ինձի
յոյս մը եթէ կայ, անշուշտ ձեր անոր
տեղ անցնելն է, քանզի գիտեմ որ
դուք ալ անոր պէս բարեսիրտ ու

առաքինի Լք : Այսուհետեւ անոր վրայ
լացած ժամանակս՝ քիչ մը պիտի
սիրտուխմ, մաածելով թէ գէթ անոր
սիրտը մեռած չէ, և դուք երջանկու-
թեանս հոգ պիտի տանիք : Չեռքէս
եկածին չափ պիտի աշխատիմ որ ձեզ
յարգելու պարտաւորութիւնս ճշդ ու-
թեամբ կատարելով՝ ձեր հայրական
խնամքներուն անարժան որդի չգըտ-
նուիմ : Ողջ եղիք :

* * *



Հ. ՆԱՄԱԿ

Տղայ մը հիւանդութենէ ելլելէն
ետքը իր ծնողացը

Սիրելի Հայր և սիրելի Մայր .

Բաւական տեսնէ որ ձեզի գիր
գրած չեմ. անշուշտ ասիկայ անհո-
ղութեան տուիք : Սահայն ես յան-
ցանք չունիմ, հիւանդ եղայ . ու

ձեզի երկիրդ չպատճառելու համար
լուռ կեցայ : Քայց աս լուսթեանս
վերջը եկաւ , քանզի , փառք Աստու-
ծոյ , հիմա աղէկ եմ , այնպէս որ
առողջութեանս լուրը հիւանդու-
թեանս լուրին հետ կրնամ ձեզի տալ :
Ես հոս առանց օգնութեան չէի , ա-
նոր համար դալ ձեզ անհանդիսա ը-
նել շուշեցի : Քայց և այնպէս ան
հիւանդութեանս մէջ , ձեր երեսէն
ու խնամքէն գուրկ ըլլալս՝ իս քիչ ան-
հանդիստ չըրաւ : Ձերմին բռնած
ժամանակը , սիրելի հայր , դուն միշտ
աչքիս առջին էիր , ձայնդ ալ ական-
ջէս չէր պակսեր : Եւ եթէ իրօք
ներկայ ըլլայիք , նեղութիւններուս
աւելի համբերութեամբ կը տանէի ,
ու բարի ու խանդակաթ մօրս ձայնն
ալ ցաւերուս դառնութիւնը կը քաղց-
րացնէր : Հիմա ալ ձեր ձայնը լսել
կուզեմ , քայց վտանգին անցնելուն

վրայ մէկտեղ ուրախանալու համար .
փափաքս ալ ան է որ հիմակուան ա-
ռողջութեանս պէս , դուք ալ միշտ
առողջ ըլլաք : Ողջ եղիք :

* * *



ՀԱ. ՆԱՄԱԿ

Տղայ մը հօրը հիւանդութեան լուրը
առնելով իր մօրը կը գրի

Սիրելի Մայր .

Գրած նամակդ սիրտս շատ ցաւ-
ցուց : Ի՞նչ , սիրելի հայրս հիմա հի-
ւանդ է : Ամենեին հանդիստ պիտի
չըլլամ , մինչև որ նամակ մը չառնեմ
ու շիմանամ որ . . . : Բայց ի՞նչ պի-
տի կրնամ խմանալ , ո՛հ , ինչո՞ւ ես
հիմա ձեր քով չեմ : Թէպէտ քեզի օգ-
նութիւն մը պիտի չկրնայի ընել , բայց
գէթ խեղճ հայրս կը տեսնէի՝ ու քեզի
հետ ես ալ կուլայի : Ահ՛ եթէ Աստ-

ուած իրենց հայրը սիրող ու յարգող
զաւակներուն աղաչանքները կը լսէ ,
չատ շանցնիր , հայրս կառողջանայ ,
բոլոր ընտանիքն ալ կուրախանայ :

Ողջ եղիք :

* * *



ՀԲ. ՆԱՄԱԿ

Ուսման նոր սկսող տղայ մը
իբ հօրը


Սիրելի Հայր :

Պատեհութիւնը ձեռքէ չհանելով՝
ձեզի աս գիրը կը գրեմ , քանզի գի-
տեմ որ դուք իմանալով թէ աս վի-
ճակէն գոհ եմ , և թէ ըրած յառա-
ջող իմութեամբս վարժապետիս դո-
հութեանն արժանի եղած եմ , պիտի
ուրախանաք : Սորված բաներուս վրայ
չատ ախորժակ ունենալէս դատ ,
վարժապետս ալ անանկ բարի սրտով

ու քաղցրութեամբ կը սորվեցնէ , որ
իմ պարտքերս կըցածիս շափ անթերի
հատուցանելու բաւական քաջալերու-
թիւն կառնեմ : Աս տունն ուր իս
գրիք , ձեր տունը միտքս կը բերէ .
հոն եղած առաքինութեան օրինակ-
ները հոս ալ կան . և ինչպէս որ հոն
հոս ալ կը ջանամ որ անոնցմէ օգ-
տիմ : Ամեն բանէ աւելի իս երջանիկ
ընտղն ու սիրտ տուողը՝ ձեր քաղցրու-
թիւնն ու բարութիւնն է : Ազգաշեմ,
հայր , ինձի ստէպ ստէպ մեր ըն-
տանեաց վրայ լուրեր տուէք :

Ողջ եղիք :


• • •



Յ. ԹՈՒՂԹՔ ԽՆԴՐՈՒԱԾՈՅ



ԳԻՏԵԼԻՔ



Այս կերպ թուղթ մը գրողը՝ պէտք է որ իր ուղիմացիներն աստիճանին ու մեծութեանը նայելով՝ գործածած ոճին պարզութիւնն ու համեստութիւնն անոր յարմարցնէ ։ Ամբարտաւանութեամբ բան մը խնդրելն՝ անոր չկատարուիլն ուզել է ։ Ասանկ թուղթերու մէջ իր անձին վրայ ալ խօսելէ զգուշանալու է . որպէս զի՝ ան մարդուն որ շնորհք մը պիտի ընէ՝ անձնասիրութեանը շղպչի . ինչու որ մարդուս սիրտն աւելի պարզ քաղաքավարութենէ մը բարերարելու կը շարժի , քան թէ արդարութենէ ։ Երբ մէկէ բան մը կը խնդրենք , ա-

նիկայ բնաւ չգովել շըլար . բայց զմեզ
նուաստացնելու չափ ալ գովել պէտք
չէ . այլ այնչափ մը որ մեր ղիմացի-
նին միտքը հաճի : Անչափ գովու-
թիւնը համալ չունենար , ու խելացի
մարդոց շատ հակառակ կուգայ : Աս-
տոնցմէ դատ , եթէ տն մարդը որ
մեր խնդիրքը պիտի կատարէ , բարե-
կամ է , համարձակութիւն պէտք է :
Գլխաւոր կէտերն ասոնք են , միա-
ցածները զբողին միտքը կրնայ հայ-
թայթել :



ՀԳ. ՆԱՄԱԿ

Գործք մը ձեռք ձգելու համար
պաշտօնի վրայ եղող մարդու

Տէր .

Թէև ձեզի հետ ծանօթութիւն ու-
նենալու պատիւը չունիմ , բայց և
այնպէս ձեր բարեսրտութենէն հա-

մարձակութիւն առնելով առ աղա-
չանաց դիրս՝ ձեռի կը գրեմ : Շատ
ժամանակ է որ (գործքին անուցը
դնելու է) ձեռք բերելու կաշխատիմ,
բայց ինձի պաշտպան և թիկունք ե-
ղող մէկը չունենալուս համար աշխա-
տութիւնս անօգուտ կըլլայ : Ասի դժ-
բաղդութեանս համար ալ սա գործին
ետեէն իյնալէ չեմ կրնար դադարիլ :
Քանզի մէկ կողմանէ ընտանեացս կա-
րօտութիւններն որ օրի կը ծանրա-
նան , մէկալ կողմանէ ալ ձեր արժա-
նաւոր համբաւն ու յարգը առաջար-
կութեանս կատարուելուն մեծ յոյս
կուտայ : Աս սլաշտօնը որ իս երջա-
նիկ պիտի ընէ , գրեթէ՝ ձեր ձեռքն
է . ձեր մէկ խօսքը բաւական է , ըն-
տանեացս աղէկ կամ դէշ ըլլալն ալ
անկէ կախում ունի : Արդեօք պիտի
կարենամ բարերարութեանդ արժա-
նի դատուիլ . արդարև ձեր ծառային

չատ մեծ շնորհք մը ըրած կըլլաք,
և ապահով եղիք որ ընտանեացս հետ
մինչև յաւիտեան ձեզի աղօթող պիտի
ըլլամ: Ողջ եղիք:



ՀԴ. ՆԱՄԱԿ

Երեւելի իշխանի մը քով եղող
բարեկամե մը շնորհք մը
խնդրելու համար

Յարգող բարեկամ.

Պատուական իշխանիդ քով ունեցած
պատիւդ՝ քու արդեանցդ ու անոր
խոհականութեան պտուղն է: Առանց
ձեզ ձանձրութիւն տալու ստիպուած
ըլլալու՝ պարզապէս այդ պատիւը վա-
յելելուդ վրայ ուրախանալ, իս աւելի
երջանիկ պիտի ընէր. քանզի ան ատեն
ձեզի հետ ունեցած բարեկամութիւնս՝
իմ շահուս համար շէր կարծուեր,

ինչպէս որ իրօք ալ այնպէս չէ : Բայց
ժամանակիս պարագաները շեղու-
ցին որ իմ խորհածիս պէս վարուիմ .
ասկէ զատ , մտածելով որ 'ինծի շը-
նորհք ընելու անձը շատ անգամ
հաստատած է որ ես իր բարեկամ-
ներուն մէկն եմ , աւելի համարձա-
կութիւն կառնեմ : Արտիս նայելու
ըլլամ , ադ շնորհքին արժանի եմ .
անոր համար , աւելի համարձակու-
թեամբ ու յուսով կը գրեմ , և կա-
ղաչեմ որ մտիկ ընես . (Խնդիրքը հոռ
գրելու է) :

Ահա քենէ ուղած շնորհքս աս է .
և ինչպէս կը տեսնես , ինծի շատ
կարևոր է : Աղէկ գիտեմ որ եթէ
քիչ մը ինծի օգնելու կամք ընես՝
գործքերս կարգի կը մտնեն : Ասկէ
աւելի բան չեմ ըսեր , չէ թէ քեզի
վստահ չըլլալու կասկած մը չսալու
համար միայն , այլ և կը վախճամ որ

ինծի շնորհք մը ըրած ատենդ՝ զգա-
լու գուարճութիւններուդ պակասելուն
պատճառ կըլլամ : Ողջ եղիր :

* * *



ՀԵ. ՆԱՄԱԿ

Մեկէ մը ուրիշի մը համար
շնորհք մը խնդրելու

Մըրելիդ իմ .

Կարելի է թէ կը յուսաք որ բարե-
բարութիւններ ընելու ձեր սովորա-
կան վախաքներովը հանգիստ պիտի
ըլլաք . բայց ոչ . կը խաբուիք : Այո՛ւ
միշտ մեծ վսիթտութիւն պիտի ու-
նենաք , բայց ոչ հանգիստ : Ձեր ա-
ղէկութիւնները շատ տեսած ըլլալով
թերևս նորէն ձեզի դիմելու երես
պիտի չունենայի : Բայց կարելի է թէ
ատ բանը ուրիշ մը խորհելու պար-
տաւոր ըլլայ , բայց ես ոչ : Արդարեւ

աս անգամ խնդրածս ինձի համար
չէ . բայց թող ուրիշի համար ըլլայ .
ձեր սիրտը ճանչնալէս ետքը որ բա-
րիք ընելու համար ստեղծուած է ձ
ալ չեմ խորհիր թէ խնդրածս ինձի՞
համար է թէ ուրիշի համար , կամ
թէ ձեզ անհանգի՞ստ կընեմ : Ձեզ
անհանգիստ ընողներուն մէկն ալ ահա
ես եմ : Արդ սիրելի բարեկամ , ձեզի
երիտասարդ մը կը զրկեմ , բարեկա-
միս մէկուն որդին է : Դուք անոր օ-
գուտ մը կրնաք ընել , քանզի կրնաք
ցուցնել թէ որ ճանբան դիւրագոյն
է , և առաջադրած գործին յաջողու-
թեանը կը տանի : Աս կարևոր շնորհ-
քը՝ ատոր ընելու համար՝ ձեզի չեմ
աղաչեր . արդէն ըսի , ձեր սիրտը կը
ճանչնամ . բաւական է որ ձեր մի-
ծանձնութիւնը ցուցնելու դիպոս ձ
մը պատահի : Միայն սա կըսեմ , որ
ադ տղան առաքինի մարդու մը զա-

ւակ է , և կրնայ մեզ վստահ ընել
որ իր հօրը ճամբէն երբէք պիտի չը
զատուի : Աս տեսակ մարդոց սրտին
մէջ ապերախտութիւն չկրնար բուս-
նիլ . ուստի յաւիտեան ձեզի երախ-
տագլտ ըլլալուն կտակած մի' ընէք :
Պանք իմ երախտագլտութեանս , ա-
սոր համար բան մը չեմ ուզեր ըսել .
արդէն զիտեմ որ ինչ երախտագլ-
տութիւն պահանջելու իրաւունքը շա-
տոնց ստացած էք , և ամենեւին բան
մը սրտիս մէջի եղածը չի կրնար ա-
ւելցնել կամ պակսեցնել : Ողջ եղիք :

* * *

ՀԶ. ՆԱՄԱԿ


Մեկուցնչիբայ տեղեկութիւն առնելու
համար քաղաքապետի մը

Մեծապատիւ Տէր .

Պարոն . . . ին հետ մեծ գործ մը

լմեցնելու վրայ ըլլալով՝ անոր վրայ
պէտք եղած տեղեկութիւնները ձեռն
ուզելու համարձակեցայ, քանզի ան
ձեր վիճակին մէջ շատ կեցաւ : Առ
զեմ իմանալ թէ որչափ ստակ կամ
ստացուած ունի, և հոն ինչ պաշտո
նի վրայ է, և որչափ պատիւ ունի :
Շիտակը ըսելով, հետը ծանօթանա
լէս մինչև աս օր՝ անոր գէշութիւնը
չտեսայ . աս հարցումս ալ՝ միայն աս
նոր վրայ ունեցած աղէկ համարումս
աւելի հաստատուն ընելու համար է :
Աս խորհուրդս ձեզի միայն կրնամ
վստահիլ, քանզի ձեր քաղաքակից
ներուն մէջ յիրաւի մեծ յարգ ու պա
տիւ ստացած էք . ուստի ձեր պա
տասխանին կ'սպասեմ, և կաղաչեմ
որ զիս ձեր ծառաներուն կարգը հա
մարիք : Ողջ եղիք :

* * *



Գ. ԹՈՒՂԹԻՔ ԵՄԵՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ԳԻՏԵԼԻՔ

Անձ մը ուրիշի մը յանձնելը սա նշանակութիւնն ունի . եթէ նամակը առնելու մարդը իշխանութեան տէր է՝ անոր պաշտպանութիւնը , եթէ բարեկամ է՝ անոր սէրը յանձնուած մարդուն համար խնդրել է : Աս կերպ թղթերու մէջ յանձնուած մարդուն դովութիւնն ընելու է , ասով անոր բարուցը վրայ իբր թէ վկայ ըլլալով՝ ուրիշին սէրն ու պաշտպանութիւնն ալ խնդրելու իրաւունք կունենանք : Եթէ նամակը յանձնուած մարդուն ձեռքը արուի , առանց կնքելու տալու է , որ իրեն վրայ գրուածները , որ հարկաւ դովեատ են , կարդալու կա-

բող ըլլայ : Աս կերպ նամակներ ,
մանաւանդ անժանօթ տեղեր , յանձ-
նուած անձին , ով կուզէ ըլլայ , միշտ
օգտակար են :

ՀԷ. ՆԱՄԱԿ

Մեկէ մը ուրիշի մը համար
գործք մը խնդրելու .


Պատուական բարեկամ .

Այսչափ ժամանակէ ի վեր ձեր ցը-
ցուցած բարեսրտութեան նշաններէն
ինձի համարձակութիւն մը եկաւ , որ
աս անգամ նոր բարերարութիւններ
խնդրեմ : Սերտ բարեկամներէս մէկը
(այս ինչ) գործքին ետեւէն է . բայց
մէկը իրեն թիկունք չունենալով , ա-
ղաչանքներն ու ջանքերը չեն կատար-
ուիր : Խորհեցայ որ եթէ դուք անոր
ձեռնտու ըլլաք՝ ուղածը կը կատար-
ուի . և գիտեմ որ դուք ալ արծա-

նաւոր մարդոց շնորհք ընել կը սիրէք, ինչպէս որ ձեր իմաստութեանն ու բարեբարութեանն ալ կը վայլէ : Աս մարդը որ ձեզի յանձնելու կը համարձակիմ, կատարեալ առաքինի է, պէտք եղած ձիրքերն ունի, ու բազմաթիւ ընտանեաց ալ հայր է : Ահա յանձնած անձս ասանկ մէկն է, և այսուհետև երջանիկ ապրելու համար, ձեր ծառաներուն կարողը մանելու կարօտ է . կը յուսամ որ դուք ալ աս շնորհքն անոր չէք զլանար :

Ողջ եղիր :

* * *



ՀԸ. ՆԱՄԱԿ

Պատասխան

Բարեկամ .

Պ. Ն. համար դրած նամակդ առի. հող մի՛ ըներ . բաւական էր որ աս

նոր յառաջ դալն ուղելդ ինծի իմա-
ցունէիր, մնացածը իմ գործս է :
Անձամբ անոր օգնելու դուն ձեռնհաս
ըլլայիր, ինչ կընէիր, գիտցիր որ
նոյնը ես պիտի ընեմ : Ողջ եղիր :

* * *

ՀԹ. ՆՍՄԱԿ

Մեկու մը ճանապարհորդ մը
յանձնեյաւ համար

Սիրելիդ իմ .

Ահա ինծի շնորհք ընելու դիպուա-
ծը եկաւ . Պարոն Պ. ձեր քաղաքը
պիտի դայ, և կը փափաքի ձանչնալ
բարեկամներս որ ատ քաղաքին մէջն
են : Քեզի մինակ սա կըսեմ թէ Պա-
րոն Պ. հոտ օտարական մը պիտի ըլ-
լայ, կը յուսամ թէ մնացածը դուն
կը հոգաս, և կրել շեռ տար ան դըժ-
ուարութիւնները զորոնք աս վիճակը

գտնուող մարդիկ ատանկ բոլորովին
անծանօթ տեղ մը կրելու սովոր են :
Ողջ եղիք :

• * *



Զ. ՆԱՄԱԿ


Անխնամ տղայ մը մեկուսն խնամոցը
յանճնեյոս համար

Տէր .

Տղաս հիմա ձեր քաղաքը Յ. վար-
ժապետին քով իր ուսմունքները կը
սորվի : Տղայ է , և ուրիշ տղոց պէս
կրնայ ըլլալ որ իր հասակին չվայլած
անհաճոյ գործքերու մէջ գտնուի :
Թէպէտ մինչև հիմա գանգատելու
բան մը տեսած չեմ , բայց կը վախ-
նամ որ գուցէ գէշ օրինակով մը գլխէ
ելլէ : Ուստի կաղաչեմ , տէր , անոր
վրայ քիչ մը հոգ տար , ու ինչպէս
ըլլալը ինձի իմացուր : Դու ալ զաւակ

տէր ես, թէպէտ աս շնորհքը մեծ է,
կրնաս փոխարէնը յուսալ. քանզի
այսպիսի հոգեր դու ալ ունիս: Ուս-
տի եթէ դու ալ ինծի գործ մը կըր-
նաս հրամայել որ կատարեմ, ես
միշտ պատրաստ եմ ու յօժարութեամբ
ձեզի կը ծառայեմ: Ողջ եղիր:

* * *



ՁԱ. ՆԱՄԱԿ

Սպասաւոր մը ուրիշ սպասաւոր մը
մեկուն կը յանձնէ


Մեծ ապատիւ Տէր .

Ձեր մարդասիրութիւնը կը ճանչ-
նամ, անոր փորձերը քանի քանի ան-
դամ տեսած եմ. ուստի աս նամակը
ձեզի գրելու կը համարձակիմ. և գի-
տեմ որ ձեզի անպատուութիւն մը
եղած չէք համարիր: Տասը տարիէ
աւելի է որ բարեկամիս մէկը Յ. ա.


ղային քովն էր . անունը Պ. է . հիմա
տէրը մեռնելով անգործ մնացած է .
և ձենէ աղէկ ով անոր տէր կըր-
նայ ըլլալ : Այնչափ բարեկամ ունիք,
որու քով որ ուզէք , դիւրաւ կրնաք
դնել . մեծ բարեգործութիւն մը ը-
րած կըլլաք , ու ետքն ալ չէք զղջար .
որովհետև Պ. համեստ , հաւատարիմ,
խոհական ու իր պարտքերը ճանչցող
մէկն է : Կաղաչեմ , տէր , ներէ հա-
մարձակութեանս . ասիկայ , ինչպէս
որ աւաջ ալ խոստովանեցայ , ձեր
բարերարութեանը վստահելով ըրի .
ուստի կը յուսամ որ աս խնդիրքս՝
թէև ձեզ ձանձրացնելու արժանի
բան մը չէ , ամենևին իմ կողմէս
ձեզի անպատուութիւն չհամարուիր :

Ողջ եղիր :

* * *



10. ԹՈՒՂՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ



ԳԻՏԵԼԻՔ



Աս կերպ թուղթեր գրելը խիստ դիւրին է . քանզի ուրիշ բան պիտի չգրենք, բայց մեր շնորհակալեաց յայտագիրը այն երախտեաց համար զոր ընդունած ենք : Բայց որովհետեւ ամեն երախտիք, և ամեն բարերար մէկ չէ, թղթերնուս մէջ ան երախտիքներուն մեծութեանը համեմատ մեր շնորհակալութիւնն ու պարտաւորութիւնը ցուցնելու ենք : Միայն զգուշանալու ենք որ շնորհակալութիւն քրած ատեն, չխոստանանք թէ դիպուած մը իյնալու ըլլայ, փոխարէնը հատուցանելու պիտի ջանանք . որպէս զի մեր ընդունած երախտիքը

մեղի ծանրութիւն մը եղածի պէս
ցցուցած չլլանք :

ՁԲ. ՆԱՄԱԿ

Մեկու մը որ առանց խնդրելու
իր պաշտպանութիւնը շնորհած է

Տէր ,

Մեծագէտ շնորհակալ ըլլալու պարտական եմ ան շնորհքին համար զոր
ձեր ծառային ըրիք • բայց զիս ձեզի
աւելի պարտաւոր ընողը՝ ձեր վարմանալի մեծանձնութիւնն է , որով
ես դեռ չխնդրած , դուք ձեր պաշտպանութիւնը ինքնակամ շնորհեցիք :
Եթէ երախտագիտութեանս ու յարգանացս նայելու ըլլաք , ձեր այս ըրածին ազնուութիւնը կրնաք խնայել : Ինչպէս որ ձեր մեծանձնու-

Թիւնն անչափ է , նոյնպէս իմ երախտազիտութիւնս չափ պիտի չունենայ : Ողջ եղիր :

* * *



ՁԳ. ՆԱՄԱԿ

Մեկոն մք որ մեր ուզածը
կատարած է


Սիրելիդ իմ .

Վերջապէս ձեր մէկ նամակէն իմացայ որ սուղ ժամանակի մէջ ուզածս կատարած էք : Ինծի ասանկ շնորհք ընելը՝ ձեզի բնութիւն եղած է , այնպէս որ , չեմ դիտեր թէ ձեռնէ ինչպէս շնորհակալ ըլլամ . ասոր համար ալ ձեր օգնութեանը կարօտ եմ : Ուստի կաղաչեմ , սիրելիս , իմ վրաս ձեր մտքին մեջ սա համոզումը ունենաք թէ՛ անչափ երախտաիրենքով ու շնորհքներով լեցուած դիւ-

բազմաց սիրտ մը՝ որչափ շնորհակա-
լութիւն ու սէր որ կրնայ զգալ, բո-
լորն ալ ձեզի համար կ'զգամ: Կը
յուսամ թէ երկու ամսէ ետքը ձեզի
գալով՝ սրտիս աս զգացումը բերնով
ալ ձեզի կրնամ բացատրել. և ար-
դարև ան ատեն աշխարհիս ամենէն
երջանիկ մարդը սլիտի ըլլամ:

Ողջ եղի՛ր

* * *



ԶԴ. ՆԱՄԱԿ

Բարերարի մը որ յայտնուիլ ջուզեր

Մեծանձն Տէր .

Եթէ երբէք ըրած բարերարութիւնս
ներնիդ մինչև հիմայ ծածկած չըլլա-
յիք, ես ալ շատոնց ձեր մեծութեան
շնորհակալ եղած կըլլայի: Հաւատա-
ցէք որ այս կերպով շնորհք ընդունելէ

կը պարտաւորիմ բոլոր կենացս մէջ
ձեզի շնորհապարտ ըլլալ: Ի դուր պի-
տի ջանաք որ բերանս գոցէք, կա-
րող պիտի չըլլաք. ես այսպիսի մե-
ծանձնութիւն մը չեմ կրնար ծած-
կել. այսպիսի գործ մը լռութեան
մէջ թողուլը մեծ օպերախտութիւն
է. եթէ իմ վրաս լռութեան պար-
տաւորութիւն դնել ուզէք, իս մեծ
բեռան մը տակ ընկձած կըլլաք. քան-
զի ձեր ըրած շնորհքին պարտաւո-
րութեանը ծանրութենէն ուրիշ կեր-
պով չեմ կրնար թեթեւալ, բայց
եթէ ձեզ հռչակելով: Ուրիշի բարե-
բարելով յայտնուիլ չուզելը՝ արդարեւ
ձեզի համար գովելի է. բայց ես մեծ
օպերախտութիւն ըրած կըլլամ, եթէ
ձեր այդ բարի յօժարութեանը հա-
մար ինծի եղած պատուական շնորհքը
ծածկելու հաւանիմ. ուստի ձեզի
ունեցած պարտաւորութեանս առա-

ջին հատուցումը՝ ձեր մեծանձնու-
թիւնը գովել և հաշակել պիտի ըլլայ :
Ողջ եղիր :



ՁԵ. ՆԱՄԱԿ


Բարեկամի մը մեր ուղածէն անելի
ստակ դրկելուն համար

Մեծանձն Բարեկամ .

Եթէ երախտագիտութիւնը հետը
տեսակ մը պատկառանք կամ ամօթ-
չունենար , ես ալ աս ամօթով պա-
շարուած չըլլայի , ձեզի պէս բարե-
կամ մը ունենալու համար հանգիստ
կեանք կրնայի անցնել . իմ երախ-
տագիտութիւնս՝ հիմայ ձեր բարե-
րարութեանը շափ է : Արդարև գըտ-
նուած վիճակիս նայելով՝ ստակի կա-
րօտ էի , բայց ձեր դրկածին կէսն ալ
բաւական էր : Գիտեմ որ աս խօս-

զիս չէք հաւանիր, ինչու որ ձեզի
պէս սիրտ ունեցող մարդիկ, երբ
ուրիշի օգուտ կընեն, իրենց յատուկ
շահը կը մտնան, մանաւանդ եթէ
բարեկամի համար ըլլայ. բայց դուք
որչափ ձեզ մտնաք, ես այնչափ ձեզ
խորհելու պարտաւոր կըլլամ: Արեմն
ներեցէք ստակին աւելորդը ձեզի
դրկելու. և կաղաչեմ որ չվշտանաք,
իմ միտքս միայն պարաքս վճարել է,
և աս ընդունելով ինծի շնորհք մը
կընէք, քանզի զիս կարօտութենէս
չատ աւելի պարտքէ մը, կամ գէտ
անհանգստութենէ ազատած կըլլաք.
մանաւանդ որ զիս խնայութեան ալ
սորվեցնել կուզեմ: Քիտեմ որ պիտի
ըսէք, ես ան ստակն պէտք չունիմ,
երբ որ կուզես՝ ան ատենը տուր.
չատ աղէկ. բայց աս դիպուածին մէջ
պէտք չէ որ ես ձեր մեծանձնութիւնը
նկատեմ, այլ պէտք է որ ընեմ ինչ

որ ինծի կը վայլէ : Ուրեմն կաղաչեմ,
յօժարեցէք առանց վշտանալու ըն-
դունիլ : Ողջ եղիք :



22. ՆԱՄԱԿ


Կարդայու համար առնուած գիրք մը
ես դրկուած ատենք

Բարեկամ :

Փոխ առած գիրքդ ահա կրկին
քեզի կը դարձնեմ : Քենէ շնորհակալ
եմ ոչ անոր համար միայն որ իմ խըն-
դիրքս կատարեցիր, այլ և օգնութիւն
ըրած եղար ան գիրքը կարդալով
հմտութեանս աւելնալուն : Գիրքը շատ
ընտիր է, և գիտեմ որ անիկայ կար-
գալու համար ծախած ժամանակս
վայրապար չեղաւ, մանաւանդ թէ
փափաք ունեցայ որ շտեմարանս ա-
ւելի լեցունեմ. ուստի շնորհք ըրէ :

ինծի ուրիշ քանի մը գիրքեր ալ շրկէ,
մանաւանդ Ազգասերն, ու Հայաս-
տանեայց Հնախօսութիւնը, ստոյգ
եղիր որ քեզի յաւիտեան երախտա-
գէտ ու շնորհակալ պիտի ըլլամ:

Ողջ եղիր:



ՁԷ. ՆԱՄԱԿ

Փոխ առնուած ստակ մը
վճարելու ատենը

Բարեկամ.

Վերջապէս կրնամ վճարել ան ըս-
տակը՝ որ ինծի փոխ տալու շնորք ը-
րիր. և ահա կը զրկեմ: Չըլլայ որ
կարծես թէ ինչպէս աս պարտքն ին-
ծի բեռ մըն էր, և ժամ մը յառաջ
անկէ ազատել կուզէի. նոյնպէս ա-
զատիլ ուզած ըլլամ երախտապար-
տութենէ. չէ բարեկամ, քեզի պար-

տաւոր և շնորհապարտ մնալն ինձի
 սիրելի է . Հիմայ պարտքէս կազա-
 տիմ , բայց երախտագիտութեան
 պարտքէն երբէք չեմ ուզեր ազատ
 ըլլալ : Ստակը քեզի հատուցանել
 փութալս անոր համար է որ խոստումս
 կատարած ըլլամ , և քու առջևդ սը-
 տախօս կամ անհող երևնալու հոգէն
 օղատիմ : Հիմայ միայն դիպուածի մը
 կը ցանկամ , որով ձեզի օգուտ ընե-
 լու փափաքող ըլլալս ցուցնեմ , և այս
 ալ ոչ թէ երախտագիտութեան
 պարտքս թեթեցնելու համար , հասկա
 կուզեմ որ իմանաս թէ ապերախտի
 մը բարեբարութիւն ըրած չես :

Ողջ եղիր :

* * *



ՁԸ. ՆԱՄԱԿ

ՄԵՆԵ գաղտնի մեզ պաշտպանող
մարդու մը

Ազնիւ Տէր .

Ձեզի շատ շնորհակալութիւններ
պարտական եմ, թերևս պիտի ըսէք
թէ ինչո՞ւ համար : Չարմանալու բան
չէ որ ձեր ըրած շնորհքը կը մոռնաք,
բանդի երբ այդ մեծանձնութիւնը
կընէիք, ձեր միտքն ան էր որ ինծի
չիմացնէք : Հիմայ յիշեցէք, տէր Թ որ
անցած օր Պ. Յ. տունը՝ մէկը, ա-
նունը տալ չեմ ուզեր, իմ անունս
աւրելու խօսքեր ըրած է : Ամեն մարդ-
ատ զրպարտչին ըսածներն իբրև
ստոյգ մտիկ ըրած են, և եթէ հոն
բարի մարդ մը չգտնուէր, որ ինքն
առաքինի ըլլալէն զատ, ունեցած
առաքինութիւններն ալ ասանկ մոլի-
ներն ամչցնելու համար կը գործածէ,

ոչ որ անոր բերանը գոցելու պիտի
համարձակէր . մեծանձն բարեկամ ,
ան բարի մարդն ահա դուք էք : Քա-
ղաքավարութիւնը կը պահանջէ կըսեն
չատեր որ թէև անհաւատալի բան մը
ըսուի պէտք է մտիկ ընենք , ու մեր
մտքին դէմ գալը չյայտնենք . սակայն
ստախօս ըլլալը ճանչցուած մարդուն
սուտը բռնել՝ ազնիւ մարդոց սրտին
գործ է . ուստի կամայ և ակամայ՝
անոր խօսքերը երկայնատութեամբ
մտիկ չեն ըներ : Իմ վրաս ատանկ ծաղ-
րելի սուտ խօսող մարդը՝ եթէ զիս
իրբև գող բամբաակէր , ամեն մարդ-
անկէ կը դարչէր , ու անշուշտ ինծի
ժամ մը առաջ իմացնելու կը նայէր .
բայց ան գողնալ ուզած է իմ անունս
որ բախտի բարիքներէն շատ մեծա-
զին է . և անոր թող տրուեր է որ
սուտերն ուզածին պէս ծախէ , և ոչ
որ իշխեր է անամօթը յանդիմանել :

Ահա տէր , մարդոց ինչ ըլլալը , գնա
ասկէ հասկցիր . և գրեթէ բոլորին ալ
աս բնութեան տէրն ըլլալուն համար
է՛ որ ձեր ինծի ըրած պաշտպանու-
թիւնը զիս առաւելապէս կը սար-
տաւորէ . արդարև ձեր պաշտպանու-
թիւնն ինծի օգտակարութենէ աւելի
պատիւ տուաւ , քանզի ամեն մարդ
իմացաւ որ դուք զիս ձեր ակնածու-
թեանն արժանի կը համարիք : Աս
ձեր խնամքն ինծի արդարև պանծալի
եղաւ ու սիրտս ուրախութեամբ լե-
ցուց : Երանի թէ իմ աս շնորհակա-
լութիւնս ալ ձեզի նոյնչափ հաճոյ
ըլլար . շնորհակալութիւն մը՝ զոր ,
ձեզ հաճոյանալու համար հրապարա-
կելէ զգուշացայ սակայն անտարակոյս
նոքէս պիտի չեղնէ : Ողջ եղիք :

* * *



11. ՕՐԻՆԱԿԻ ՏՈՄՍԱԿԱՑ

ԳԻՏԵԼԻՒՄ

Տոմսակները՝ նամակներէն միայն բանով մը կը տարբերին . այսինքն , նամակներու սէս, տոմսակներու վերջն ու սկիզբը սովորական քաղաքավարութեան խօսքերը չկան : Շատ ատեն կէս թերթ թուղթը՝ երկուքի ծալելով վրան կը գրուի , երբեմն ալ չի կնքուիր : Բայց եթէ տոմսակն առնելու մարդը պատուաւոր կամ գրողէն մեծ մէկն է՝ կէս թերթի վրայ գրել ու բաց զրկել՝ մեծ անքաղաքավարութիւն է : Տոմսակներուն ու մանաւանդ հրուէրի համար գրուածներուն մէջ քիչ մը զուարճաբանութիւն ընել միւս շունի , բայց սա ալ ամեն մարդու չըլլար :

Կարգայու համար փոխ առնուած
գիրք մը ետ դրկելու ատեն

Տէր , կարգայու համար ինծի գիրք
մը տուիք . ահա նոյն գիրքը հիմայ
ձեզի կը դրկեմ , բայց կը խնդրեմ որ
տումսակս բերողին՝ անոր միւս հա-
տորը տաք :

* * *

—o—

Ճաշի հրահիրելու համար

Տէր , ես ու մայրս քեզ կողջուենք
ու կաղաչենք որ՝ վաղը իրիկուն ժամը
տասնումէկին մեզի հրամէք , որ ընթ-
րիքը մէկտեղ ընենք :

* * *

—o—

Պատասխան

Տէր , Ձեր ինծի ցուցուցած պատ-

ւոյն համար շատ շնորհակալ եմ. վա-
ղը ժամը տասնըմէկին կուգամ:

* * *

— 0 —

Ռերիշ պատասխան

Ձեր ինծի ցուցուցած պատուոյն
շատ շնորհակալ եմ. բայց կը ցաւիմ
որ՝ կանխաւ ուրիշի մը խօսք տուած
ըլլալով պիտի չկրնամ գալ. ուստի
ներեցէք :

* * *

— 0 —

Ռերիշ տոմսակ հրահրանաց

Սիրելի բարեկամ, ճաշի համար աս
օր ձեզի պիտի սպասեմ, կը յուսամ
որ ադ բերկրութիւնն ինծի տալու
արգելք մը չէք ունենար :

* * *

Պատասխան

Բարեկամ, ձեր հրաւիրանաց տոմսակը ձեռքս հասաւ, բայց ատենն անցած էր. քանզի հարկաւոր գործքի մը համար ուրիշ տեղ գտնուելովս հաւատացէք թէ ըսեմ, կենացս մէջ երջանիկ օրէ մը զբկուեցայ :

* * *

—o—

Ուրիշ պատասխան

Հրաւէրդ շատ աղէկ ատեն ինձի հասաւ, ինչու որ այսօր քիչ մը սրտի նեղութիւն ունիմ, որ բարեկամներու տեսութեամբ դիւրաւ կը վարատի :

* * *

—o—

Հրաւեր ընտանեկան

Շաբաթ օրը՝ որ ամսուն վեցն է՝

Ժամը երեքին հետոք քիչ մը ախորժակ
առ եկուր, որ առողջ ըլլալուդ նշան
ըլլայ :

* * *

— 0 —

Պատասխան

Շարաթ օրը անանկ ախորժակով
մը գալու կը խոստանամ, որ իր բա-
րեկամները պատուել ուղղէն գատ,
բոլոր հոն գտնուողները պիտի վախ-
ցընէ :

● ● *

— 0 —

Ուրիշ տոմսակ

Սիրելի, եթէ վազը ժամը չորսին
իս տեսնելու համար տուն գաս, ինձի
մեծ շնորհք ըրած կըլլաս :

* * *

— 0 —

Ուրիշ տոմսակ

Միրելի, կը յուսամ թէ անցեալ ի-
րիկուն ասկէ ողջ առողջ տուն հա-
սաք: Տիկինդ ու զաւկներդ սիրո՞
կողջունեմ:

* * *

— 0 —

Պատասխան

Ես ու բոլոր ընտանիքս, Ձեր մե-
վրայ ունեցած խնամոցը համար շատ
շնորհակալ ենք, անհող եղիր, ան
իրիկուն յաջողութեամբ մեր տեղն
հասանք, և ողջ առողջ ենք:

* * *

— 0 —

Մեկը տունը ջգտնուած ժամանակը
բարեկամ մը կուգայ տոմսակ
կը գրէ

Այսօր հոս եկայ որ ձեզի հետ կա-

ըւոր բանի մը վրայ խօսիմ. բայց
դժբախտութեամբ ձեզ չկրցայ գըտ-
նել. ուստի վաղը ժամը չորսին՝ նո-
րէն պիտի գամ, կաղաչեմ որ տունը
գտնուիք :

• • •

—o—

Խօսքը բռնել չկրցող մը ինքզինք կարդարացնէ

Երէկուան համար ձեզի տուած
խօսքս չկրցայ բռնել. ուստի պէտք
է որ ձենէ թողութիւն խնդրեմ :
Երբ ձեզի գալ կուզէի՝ ամենևին միտ-
քէս չանցած կարևոր բան մը պա-
տահելով՝ ուրիշ տեղ մը երթալ հարկ
եղաւ : Ճամարիտ, շատ ամօթով եմ
և մինչեւ որ ձենէ տոմսակ մը չառ-
նեմ թէ ներած էք, չեմ կրնար հան-
գիստ ըլլալ :

* * *

—o—

Պատասխան

Անանկ դիւրաւ չեմ ներեր . ու մինչև որ ադ պակսութեանդ տեղը չլեցնես, պիտի չներեմ : Նայէ, եթէ իրաւ գղջալու սլարտաւորած ես, վաղը ժամը երեքին՝ ճաշը մէկ տեղ ուտելու համար մեզի հրամէ որ յանցանքդ ներուի :



— 0 —

Առաջոց իմացնելու համար թէ մեր տունած խօսքը պիտի չկրնանք բռնել

Բարեկամ, տունած խօսքիս համեմատ՝ գալ կիրակի ձեր աունը պիտի չկրնամ գալ : Այս օր գեղէն մէկ բարեկամս եկաւ զոր շատոնց տեսած չէի, ու քիչ օրէ ալ պիտի երթայ . բայց մինչև որ երթայ, վայրկեան մը չեմ կրնար անիկայ թողուլ : Եթէ

աս հարկը չըլլար, իս ձեր ընկերու-
թեանը զուարճութենէն ու սլատուէն
զրկող մը ամենեւին չէր կրնար ըլլալ:

* * *

—o—

Օրինակի մտերմակաց եւ
վնարումն ձեռագրաց

300 դահեկան .

Մարտին վերջը՝ Պարոն Յակոբին
Օսմանեան ոսկին 100 դրչ հաշուվ
պիտի հատուցանեմ 300 դահեկան,
որուն (այս ինչ) բանին համար պար-
տաւորուեցայ :

Կ. Պոլիս 2 Յունվար 1881

* * *

—o—

Ռերիչ մտերմակ

400 դահեկան .

Ստորագրեալս պարտիմ ու կը խոս-

տանամ որ դալ մայիս ամսուան քսանին սլիտի վճարեմ. Պ. Յ. ին 400 դահեկան մէճիտը 20 դրը հաշուով, զոր ինձի փոխ տուած է :

Կ. Պօլիս 4 Փետր. 1881

• • •

—o—

ՁԵՌԱԳԻՐ ՎՃԱՐՄԱՆ

Փոխ տուած ստակը առնելուն համար

Ստորագրեալս կը խոստովանիմ ու կը հաստատեմ որ՝ 1881. յունվարի 8 ին. Պ. Յ. ի փոխ տուած 800 դահեկանս՝ ամբողջ իրմէ առի, ստակ մը առնելիքս չմնաց :

• • •

—o—

Տան վարձքն առնելուն համար

Ստորագրեալս, 1880 Յուլիս մէկէն՝ մինչև Դեկտեմբեր 31 վեց ամսուան

տանս վարձքը , 600 դահեկան , Պ.
Յ. էն ամբողջ առի . այս ամիսնե-
րուն համար ստակ մը առնելիքս չը
մնաց :


Կ. Պօլիս Յ Յուլիս 1880

—o—

Վաշխը առնելուն համար

Ստորագրեալը կը խոստովանիմ որ
Պ. Միրախէ ունեցած հինգ հարիւր
դահեկան պահանջիցս 1881 յունվար
1 թուականէ մինչև դեկտեմբեր 31
մէկ տարուան վաշխն վաթսուն դա-
հեկան՝ ամբողջ առի . հիմայ հինէն
ստակ մը առնելիքս չմնաց :


* * *



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ



Վաճառականութեան մէջ նամակագրութիւնը խիստ կարևոր է . ամեն բան անով կրլայ . մանաւանդ Եւրոպիոյ կանոնաւոր տէրութեանց մէջ նամակագրութիւնը յատուկ օրէնքով պատուիրուած է : Գաղղիոյ օրինագրին մէջ , առևտրական օրինաց Յրդ յօդուածն այսպէս կը պատուիրէ . « Ամեն վաճառական պարտաւոր է ընդունած նամակները ծրարար ընելով պահել , իսկ ղրկածներուն պատճէնը առանձին մատենի մը մէջ օրինակել » :

Թէպէտ մեր լեզուին մէջ առևտրական նամակագրութեան համար

որոշ և կատարեալ արուեստական
բառեր և առանձին նամակազրական
ոճ չկայ, բայց և այնպէս աս տեսակ
նամակներ գրողներ պէտք է որ ա-
ռևտրական թղթակցութեան գէթ
ընդհանուր կանոններուն հետևին,
որոնք ուղիղ բանն ու ձաշակն ալ կը
թեւրադրեն: Աս փոքրիկ գործին նեղ
և անձուկ սահմանը չի ներեր որ աս
կանոններուն վրայ երկայն խօսինք,
և կարելի եղածին չափ առևտրական
արուեստական բառերու, գոնէ ցարդ
սովորական եղածներուն, ցանկը դը-
նենք: Միայն համառօտիւ սա չափ
ըսենք թէ աս տեսակ նամակներ
պարզ, յստակ, աւելորդ բառերէ,
ձեւերէ, զարդերէ և մանաւանդ ար-
ուեստակութենէ ազատ ըլլալու են:
Թէպէտ գրողին և անոր որուն կը
գրուի՝ վիճակին եւ աստիճանին հա-
մեմատ քաղաքավարութիւն և ծանօ-

բութիւն կը պահանջուի, բայց ոչ
 այնչափ որչափ շնորհաւորութեան և
 ուրիշ քաղաքավարական նամակներ
 բու մէջ կրնայ ըլլալ, ոչ ալ ընտա-
 նեկան նամակներու մէջ թոյլ տուա-
 ծին չափ թեթեւ և զուարթ կերպով:
 Վաճառականաց մէջ նամակագրու-
 թեան սովորական նիւթերը հետե-
 տալներն են. շրջաբերակոն. գործ
 ընելու առաջարկութիւն, կամ յա-
 րաբերութեան մէջ մտնել. գին եւ
 վաճառք. հակառակ հրաման. տե-
 դեկութիւն ուզել. տեղեկութիւն տալ.
 վաճառ. դրկելու, կամ փոխանակա-
 գրոց եւ ուրիշ վճարմանց ազդ. վա-
 ճառաց եւ ուրիշ իրաց ընդունելու-
 թեան յուր. ստակ խնդրել. գանգատ.
 պահանջում. յանդիմանութիւն. շա-
 տագովութիւն. հաշուոց եւ շահուց
 յայտարարութիւն. յանճարարու-
 թեան կամ համարման (գրեալի) թուրք.

սնանկութեան , կամ ճախորդութեան
յայտարարութիւն , երբեմն նաև շը-
նորնակալութեան եւ մաղթանաց
թուղթեր :

Ասոնց գլխաւորներուն վրայ մէյմէկ
համառօտ օրինակներ դնենք :

Ա. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Կոստանդնուպօլիս . . . 18


Տէր , կամ Տեարք * * * Ի Բարիզ .

Կը համարձակիմ իմացնել ձեզ որ
Յունվար 1 էն սկսեալ , աս քաղաքիս
մէջ , Աւետիս , Զոհրապ և ընկերու-
թիւն անուամբ առևտրական տուն
մը կազմելու որոշումն ըրած ենք :
Մեր գործը , գլխաւորապէս , ամեն
տեսակ վաճառք յանձնարարութեամբ
մատակարարել պիտի ըլլայ :

Հաճեցէք մեր անունները նշանա-
կել , և մեր ձեզի ծառայելու պատ-

րաստ ըլլալուն յօժարութեանը հետ ,
մեր անկեղծ ողջոյնն ալ ընդունե-
ցէք , աէր : Ողջ եղիք :

Պիտի ստորագրէ Կ. Պ. Սւետիս •
» » Յ. Զոհրայ •




Բ. ԳՈՐԾՈՅ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Տէր .

Ձեր տանը պէս 'պատուաւոր ասան
մը հետ գործելու յարաբերութեամբ
կապուելու ջերմ փափաքը՝ ինծի հա-
մարձակութիւն տուաւ ձեզ ալ ուզ-
ղելու չըջաբերական մը զոր կը յու-
սամ թէ անցեալ թղթաբերով ընդու-
նած էք : Աս առանձին նամակով զոր
ձեր համարումը վայելելուս համար
գրելու կը համարձակիմ , կը խնդրեմ
որ փոքրիկ յանձնարարութիւն մը ա-
պրասպրելով՝ փորձ մը ընէք : Վստահ
եմ թէ առաջին փորձով իմ գործե-

լու կերպս պիտի ճանչնաք, և ցուցընելու փոյթէս պիտի հասկնաք թէ ձեզ իմ թղթակիցներուս կարգը թուելու որչափ կը ցանկամ :

Ընդունեցէք, տէր, իմ մեծարանացողջոյնս :



ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ ՆՈՅՆ ՆԻԻԹԻՆ ՎՐԱՅ

Տէր .


Յունիս 22 թուականով ձեզի շըրկած նամակս յիշելով, դարձեալ կիմացնեմ որ ձեզի հետ գործ ունենալու եռանդուն փափաքող եմ . և այս անգամ ձեզի, մեր երկրին սովորական առուտուրի նիւթ եղող քանի մը յօդուածներու ցանկը՝ ամեն մէկուն որոշ գինովն հանդերձ ձեզի կուղարկեմ : Նշանակած յօդուածներս ձեր

գործին կամ արուեստին ընտանի և սովորական են, և գիտեմ որ ասոնք ուրիշներու յանձնարարութեամբ ընդունելով, դժգոհութեան առիթ ունեցած էք: Արչափ ուրախ պիտի ըլլամ, եթէ իմ ծառայութիւնս ձեզի աւելի շահաւոր դատուելով, մեր յարաբերութիւնները սկսելու որոշումն ընէք:

Կը համարձակիմ ձեզ վստահ ընելու որ մեզի յանձնուած շահերը մինչեւ ցարդ, միշտ առանձին փութով և խնամով կատարելով, մեր թղթակիցներուն հաճութիւնը վայելած եմ:

Ընդունեցէք, տէր, իմ յարգանացս հաւաստիքը:

* * *



ՅԱՆԿ ՎԱՃԱՌԱՅ

Խառնուտ , այսնա	Գաղ .	Մէթ	Փր .
Չառնաւուխտ , սադէն	»	»	»
Սնդուս , ճամփես	»	»	»
Նարոտ . պասմա	»	»	»
Թաւիչ , գատիճե	»	»	»
Չանկապան մետաքսեայ այր			
մարդու սպիտակ երկոտասանը			Փր .
Նոյնը կնոջ		»	»
Ծօպ , գօրտէլա զառնաւուխտ			
Թիւ 12—4			»
Շար , քիւլպէնտ նուրբ	Մէթրը		Փր .
Ասուի , ջոնիա սեաւ	»		»
Չեռնոց մօրթէ , Թիւ —			
վրայէ վրայ			
Նոյնը մետաքսէ			Փր .



Գ. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄՏՆԵԼ

Տէր .

Չեր ամսոյս 12 ին զրաժ նամակին
համեմատ , որով քանի մը պիտանի

յօղուածներու ցանկն ու գիները ինծի
հաղորդելու աշխատութիւնը յանձն ա-
ռած էիք, փորձ մը ընել յօժաբեցայ, օ
յուսալով թէ աս համարձակութիւնս
առ յաւայս մեծամեծ և կարևորա-
գոյն յանձնարարութիւններ ընելու ին-
ծի առիթ սիտի ըլլայ :

Ուստի կը խնդրեմ որ ըստ կարի ա-
րագ ղրկէք ինծի :

72 փաթեթ (թօփ) ծոպ զառնա-
ւուխտ պայծառ գուներով, մինակ 10
փաթեթը սև ըլլայ :

120 ձեռնոց մորթէ ձեր նշանակած
թիւերով :


60 Երկուսասանեակ (տուզիկա) ըս-
տիտակ զանկապան կնոջ :

Փոյթ տանիք որ ձեռնոցները մնա-
ցած վաճառք չըլլան, և արատ չու-
նենան : Յուսամ թէ ճամբու ծախուց
թեթև ըլլալուն մեծ խնամ կը տանիք :

և ձեռքս հասնելուն պայմանաժամը
ուրիշ օրը շանցնիր :

Հաշուեցուցակով (Ֆարքուրա) հան-
դերձ, նամակնուղ սպասելով, կը
մնամ ձեր բարեկամը .

* * *



ՆՈՅՆ ՆԻԻԹԻՆ ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

Տեարք . . . և ընկերութիւն . վա-
ճառականք ի . . .

Նամակս ձեզի հասնելուն պէս, հա-
ճեցէք ուղարկել ինձ այս ինչ սուր-
հանդակով որ այս ինչ տեղ կիջնէ
(կամ, երկաթի ճամբով) հետևեալ
վաճառքը :

1. Հարիւր քիլոկրամ սպիտակ շա-
քար, այս ինչ յատկութեամբ և այս
ինչ գնով :

2. Հինգ հարիւր քիլոկրամ պղպեղ,

այս ինչ յատկութեամբ և այս ինչ
զնով :


Յ. Հարիւր լիար խաչխաչի իւղ , նոր
բերք ըլլայ և այս ինչ յատկութիւնն
ու այս ինչ զիսն ունենայ :

Ար խնդրեմ , խնամ տանիք այնպիսի
կերպով սնտուկներու մէջ զնելու և
պատատելու որ կորուստ կամ եղծում
չպատահի :

Յիշեալ վաճառքը անձնաս ընդու-
նելուս սկս , մեր մէջ ընդ ունուած
սովորութեան համեմատ՝ ձեզի եւ եք
ամիս սրայմանով փոխանակազիր մը
կը զրկեմ : Աղջ եզիք :

Ձեր բարեկամը

* * *



Դ. ՎԱՃԱՌ ԶՐԿՈՒԱԾ ԸԼԼԱԼՈՒՆ
ԱԶԴ

Վաճառքներուն յօրինուածը (Ֆա-
թուրան) նամակին գլուխը կը գրուի

Տէր .

Աս նամակիս սկիզբը պիտի գտնէք
հաշուեցուցակն (Ֆարուրան) ան վա-
ճառքներուն՝ որոնք ձեր մեզի այս
ինչ թուականով գրած նամակովը
խնդրած էիք :

Յիշեալ վաճառքը խնամով կատել
և պատասխել տալէ ետքը՝ այս ինչ
օր այս ինչ սուրհանգակին կամ այս
ինչ շոգնկառաց կամ շոգենաւուն
յանձնեցիք . ուստի այս ինչ օր պի-
տի ընդունիք :


Կիսացնենք ձեզի որ ընկալանք այս
ինչ գումարը զոր մեզի այս ինչ
թուականով գրկած էիք , անով մեր
մինչև նոյն թուականը նշած հաշիւը

վճարուած կըլլայ, այնպէս որ դուք
մեզի միայն այսօրուան զրկուած վա-
ճառաց համար պարտական կը մնաք:

Ողջ եղի՛ր :

Ձեր բարեկամը

* * *



Ե. ԳԱՆԳԱՏ

Տէր .

Ձեր զրկած վաճառքն հասան այս
իճջ թուականին, ինչպէս որ ձեր
վերջին նամակովն իմացուցած էք :
Վաճառքն ընդունեցայ սակայն պա-
հանջուած յառկութիւնները չունէին,
և դիներն իրենց առևտրական արժե-
քէն վեր էին: Ընդունելուս պատճառն
աս էր որ դժուարութեանց առիթ-
չտամ, քանզի դժուարութիւններէ
կարելի եղածին շատի կը փախչիմ, մա-

նաւանդ որ շը՛ղ ունելոյս կրնար հոս
համարմանս (գրեալի) վնաս գալ :

Ալ յուսամ թէ իմ աս վարմունքս
հաշուի կառնէք, և եթէ նոյն վաճա-
ռաց գինը իջեցնել յանձն շառնուք,
գէթ սա նկատուիլ կընէք որ ինծի
նոր վաճառք գրկելու առաջին առ-
թիւ գիւրութիւն մը կուտաք, որ
այս անգամ ըրած կորստեանս հա-
տուցումն ընդունելու կարող ըլլամ :

Ողջ եղիք :

Ձեր անձնուէր բարեկամը

* * *



Զ. ՎԱՃԱՌԱՅ ԸՆԴՊԻՆԵԼՈՒԹԻՒՆ
ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆ

Տեարք Այս անուն, վաճառ ահանք
ի . . .

Ձեր ինծի այս ինչ սուրհանդակով

կամ շոգ ենաւով կամ շոգ եկառօք եւ
այլն զրկած վաճառքը , ձեր նստակիին
մէջ նշանակուած ժամանակին , այ-
օրինքն ի . . . այս ինչ ամսոյ ընկալայ :

Իոչոր վաճառքը մեծաւ մասամբ
աւրուած էր . շաքարն ու աղը թըր-
ջած , և թէ քանակութեան և թէ
յատկութեան մասին բաւական կո-
րուստ կրած էին . նոյն վնասը սլըղ-
պեղին ալ պատահած էր : Իսկ իւղին
գէթ վեցերորդ մասը տակառէն ծո-
րելով կորսուած էր . ուստի զանոնք
ընդունիլ ինծի անկարելի եղաւ , ա-
նոր համար ըստ օրինի աժեցնել տուի ,
յետոյ այս ինչ տեղ ի պահեստ դնել
տուի :

Վաղաչեմ որ ձեր կողմանէ մէկը
նոյն տեղը զրկէք որ քննէ . թերեւ
կրնաք ձեզի օգտակար կերպով ես
առնելով ինծի նորէն ուրիշ վաճառք
յուղարկէք :

Ինչպէս որ ըլլայ, այսչափ օրուան
պայմանաւ ձեր որոշմանը կստատեմ.
Քանզի յիշեալ վաճառաց պէտք ուրիմ,
և հարկ է որ ձեր կամ ուրիշ տան մը
միջնորդութեամբ զանոնք վերստին
բերել տամ. Ողջ եղիք :

Ձեր անկեղծ բարեկամը

* * *



Է. ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Տէր .

Ասալմունք ըրած էք ձեր զրկած
վաճառաց մէջ որոնք իմ այս ինչ
թուականով գրած նամակաւս ձեռնէ
խնդրած էի : Վաճառքը հասան,
բայց այնպիսի վիճակի մէջ որ գտնոնք
ընդունել ինձի անկտրելի էր : Աարօ
միր գինին չունէր ան յատկութիւնը
և ան համը զոր ես կը պահանջէի .
Ինչպէս որ նամակիս մէջ յայտնի նշա-

նակած եմ: Օղին ալ պահանջուած
աստիճանը շունէր. վերջապէս սպի-
տակ գինին ըսլորովին աւրուած էր:
Ուտի հարկ եղաւ ինծի աս թերու-
թիւններն ըստ օրինի ապացուցանել,
և ձեր վաճառքը հիմայ այս ինչ տեղ
ի սահեատի դրուած է: Կիմացնեմ
որ յիշեալ ըմպելիները, կարելի ե-
ղածին շափ շուտով ետ առնէք, և
իմ սպայմաններուս համեմատ ինծի
գինի և օղի նորէն գրկէք, եթէ չէք
ուզեր որ մեր առևտրական յարարե-
րու թիւնները եղծուին:

Անկեղծ ութ եամբ կողջունեմ ձեզ:

* * *



Ը. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՆԵԼ

Տ՛ր .

Բաւական ժամանակ է որ ձեր հա-
ճոյական լուրերն ընդունելէ զուրկ

մնացած ենք . և որովհետև աս օրերս
մեր տարեկան հաշիւները տեսանք ,
արժան համարեցանք աս պատեհու-
թեամբ՝ ձեր մեզի հետ ունեցած
հաշուին համառօտութիւնը ձեզի զըր-
կել : Աս համառօտութիւնէն պիտի
տեսնէք որ դուք մեր վրայ փոքրիկ
դումար մը 338-10 Փրանք առնելիք
կունենաք , զոր ձեր հաշուետոմարին
մէջ մեր պարտուցը կարգը նշանակե-
լու չմոռնաք :

Ենորէք ըրէք , Տէր , մեզի խմացնե-
լու թէ արդեօք այս ինչ տունը իր
առջի բարի համարումը տակաւին կը
վայելէ՞ , և թէ կրնանք ամենայն ա-
պահովութեամբ անոր հետ դործել :

Ողջ եղիք :

Անկեղծութեամբ կողջունենք ձեզ :

* * *



Թ. ՓՈԽԱՆՍԿԱԳՐԻ ԱԶԴ

Տէր .


Շնորհակալութեամբ — կիսացնենք ձեզի որ ամսոյս 12 ին գրած նամակնիդ ընկալանք , և կը խնդրենք որ մեր փոխանակագիրը զոր ձեր անուանն է , ի հաշիւ մեր ընդունիք , և վճարէք :

Տրանք 3,000 , ըստ հրամանի Մանուկեան և եղբարց ի 20 առաջրկոյ Գեկանմբերի :

Վստահ եղիք որ մեծ փոյթ ունինք ի լրանալ պայմանաժամուն յիշեալ գումարը ձեզի հասցնելու :

Ընդունեցէք , Տէր , մեր անկեղծ ողջոյնը :

* * *



Ժ. ՎՃՍՐՄՅՆ ԱԶԴ.

Տէր .

Ընկալանք ձեր նամակը զոր ամսոյս
7 ին գրած էիք , հանդերձ վաճառքի
հաշուեցոյցովը որոց գինն է : Պրանք
7862 սանդիմ 75 , զոր ձեր պահան-
ջից հաշուին գրեցինք :

Աս նամակիս մէջ պիտի գտնէք հե-
տեւեալ ընդունական թղթերը :

- | | |
|------------|-------------------------------------|
| Քր. 1,000 | որոց պայմանաժամն
արդէն հասած է . |
| » 5,211 | վճարելի 15 Յուլիս |
| » 900 | » առ օրին |
| » 1,817-42 | » տեւանաւելին
40 օր ետքը |

Ընդամենը Ք. 6,028-42 զոր հաճեցէք
մեր պահանջից հաշուին գրել , և ձե-
զի հասնելը մեզի իմացուցէք :

Ընդունեցէք մեր մեծարանքը :

ԺԱ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՏԱԼ

Տէր •

Աս քաղաքին մէջ մեր մտերիմ բարեկամներէն մէկը, 1874 ին Մանչէսթէրի Պարոն Յ. Մամիկոնեանի տունը, իբրև խիստ հաստատուն տուն մը, մեզի յանձնեց: Այդ տան երաշխաւորութեամբը Մանչէսթէրի ուրիշ տան մը հետ ալ առուտուր ունեցանք, որ հաւանականաբար Պ. Յ. Մամիկոնեանի վարկովը հրապարակ իջած է:

Յիշեալ տանց հետ մեր ունեցած յարաբերութիւններն ասոնք են, և ինչպէս ան ժամանակէն ի վեր նոր տեղեկութիւններ տունելու պատահութիւն, նոյնպէս մինչև ցայսօր անկէ դժգոհութիւն մը չունեցանք: Աջ ցաւինք որ ասկէ առելի մանրամասն տեղեկութիւն չենք կրնար տալ. ձե-

զի օգտակար կամ հաճոյ ծառայութիւններ ընելու միշտ պատրաստ ենք, և ինչպէս մինչև ցարդ, այսուհետև ալ մեզ դէպ ի ձեզ միշտ սիրալիր և անձնանուէր պիտի գտնէք :

Ընդունեցէք մեր մեծարանացող ջոյները

* * *



ԺԲ. ՎՃԱՐՄԱՆՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Տէր •

Մեծաւ ուրախութեամբ ձեր ամսոյս 4 ին զրած նամակն ընկալանք :
Մեզի յուզարկած էիք :

Քր. 400	»	Պ. Գ. Մ. ի	ձեռ շնորհ ամսոյս	15 ին
» 4500	»	» Յ. Ս. ի	»	» 16 ին
» 434	»	» Գ. Մ. ի	»	» 31 ին
» 171 25	»	Ն. Կ. Կ. Կ. Կ.	»	» 31 ին

Քր 5502 25 ընդ ամենը, ի հաշիւ ձեր պարտուցը :

Կիմացնենք ձեզի, տէր, որ աս
վճարմանց վրայ դուք մեզի փոքր գու-
մար մը 264 Քր. պարտական կը մը-
նաք, և կը յուսանք թէ ձեր պար-
տուց հաշիւներուն մէջ ճիշդ նոյնը
պիտի գտնէք :

Մեր սովորական անկեղծութեամբը
ձեզ կողջունենք :

* * *

ԺԳ. ՀԱՇՈՒՈՅ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԻՐՐՈՒԹԻՒՆ

Տէր .

Ձեր 24 Հոկտեմբեր և ներկայ ամ-
սոյս 4 թուականով գրածներն ըն-
կալանք :

Ինկտեմբեր 31 ին ձեր հաշիւնե-
րուն քննութիւնն աւարտելով, մեզի
մեր հաշուոյն համառօտութիւնը հա-
ղորդած էիք, որմէ կը տեսնուի որ


մեր ձեռնէ առնելիքը կելայ 3813 Քրո

Արդ, քննելով կիմացներն որ ճիշդ
մեր հաշիւներն ալ ձերիններուն հետ
միաբան են :

Հաճեցէք ընդունել, Տէր, մեր
անկեղծ շնորհակալութիւններն այն
մտերիմ ըզձից և շնորհապարտ ընող
յայտարարութեանց համար զոր նոր
տարւոյն առթիւք մեզի համար ըրած
էք : Մենք ալ մեր կողմանէ նոյները
կը հատուցանենք, և վստահ կընենք
ձեզ որ մեր յարաբերութիւններն այ-
սուհեան աւելի ընդարձակ և աւելի
գործունեայ սիտի ըլլան, եթէ սլա-
րագաները ներեն :

Ընդունեցէք, տէր, մեր անկեղծ
ողջոյնները :

* * *




ԺԴ. ՀԱՄՅՐՄԱՆ ՆԱՄԱԿ

Այս թուղթը ձեզի մատուցանողը
Պարոն Գ, Ճրագեանն է :

Կաղաչեմ որ զի՛քը խնամով ըն-
դունիք, և ընկալադիր առնելով հա-
տուցանէք իրեն պէտք եղած գու-
մարը մինչև երկոտասան հազար Փը-
րանք :

Մեծապէս շնորհապարտ պիտի ըլ-
լամ այն ամեն մտերիմ ծառայու-
թեանց համար, զորս յիշեալ անձին
պիտի մատուցանէք, և մեր անկեղծ
շնորհակալութեանը վրայ արդէն ա-
պահով կրնաք ըլլալ: Ընդունեցէք,
Տէր, մեծարունացս հաւաստիքը:

* * *



ԺԵ. ՉԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ


Տէր .

Գիտէք ապաքէն որ ամառյս Յին
վճռով սնանկ հրատարակուելու դըժ-
բախտութիւնն ունեցայ, և թէ պար-
տատեաքքս ամառյս ՉՅին ժողուրվե-
լու հրաիրուած են :

Յիշեալ որը յառաջիկայ թշուառ վի-
ճակիս համեմատ անոնց առաջարկու-
թիւններ պիտի ընեմ, որոց երաշ-
խաւոր տալու պատրաստ եմ : Ուստի
ձեզ ևս կաղաչեմ, Տէր, որ առ կողմ-
ներ վտասաչու թեանն արժանի անձ մը
ներ կողմանէ փոխանորդ կարգէք,
որպէս զի յիշեալ պարտատեարց ժողո-
վին մէջ ժառանգ ունենայ, և եթէ հարկ
ըլլայ, անորազբէ այն համաձայնու :

Թեան գիրը (գոնգորտա) գրք կը յուս
սամ թէ կրնամ ձեռք բերել : Աստա՛հ
եմ թէ ձեք մարդասիրութեամբը
թշուառ վիճակիս կարեկից ըլլալով
համաձայնութեան գրոյն ստորագ-
րուելուն արգելք չէք յարուցաներ :
Բայց առ ալ գիտցած ըլլաք, Տէք,
որ յիշեալ դաշնագրութեան պայման-
ներն ինչ որ ըլլան, դուք իմ վրաս
բան մը պիտի չկորսնցնէք . ձեր կո-
րուստն քիչ մը ժամանակ սպասելէ
ուրիշ բան պիտի չըլլայ : Եթէ կը նանչ-
նաք դիտ, և ան ստորագաները որ
առ ձախորդութիւնն ինծի բերին,
փտա՛հ եմ թէ ինծի ներողամիտ,
մանաւանդ թէ կարեկից ալ պիտի
ըլլաք : Աս յուսով կազմչեմ որ ըն-
դունիք իմ մեծարանաց և շնորհա-
կալեացս հաւաստիքը :

* * *



ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ

Կ. Պօլիս, 1 Ապրիլ 1881

5,000 Ֆրանքի համար

Առաջիկայ Յուշիս ամսոյ հինգին
հաճեցէք վճարել, փոխանակագրիս
այս առաջնոյ օրինակին, Մանչեսթէրի
վաճառական Բարիկեան Տ. Խաչա-
տրոյ հրամանին (կամ իմ հրամանիս)
հինգ հազար ֆրանք՝ որ է զին վա-
ճառաց զորս ձեզի զրկեցի հանդերձ
հաշուեցուցսկաւ (Ֆարքիւր) անցեալ
Յունիար 15ին : Այլ ևս ազդարարու-
թեան մի՛ սպասէք :

Գարեգին Մակարեան վճուկն
ի Կ. Պօլիս, փողոց ... թիւ ...

Առ Տ. Խաչիկ Համբարձումեան

ի Չիլեանիս :



ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

Ազեքսանդրիա , 1 Ապրիլ 1881 :


1,000 Ֆրանքի Համար .

Առաջիկայ Յունիս մէկին Հաճեցէք
վճարել , սոյն փոխանակագրոյս , իմ
հրամանիս , Հազար Ֆրանք , որոյ փո-
խարէնն ունիք ի ձեռին առ իս ու-
նեցած պարտիւքդ : Այլ ևս ազդա-
րարութեան մի' սպասէք :

Յ. Մերունեան

Առ Տ. Մանուկ վաճառական

ի Բերիա :



ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

Կ. Պօլիս , 10 Յուլիս 1881 :

500 Ֆրանքի Համար .

Առաջիկայ Սեպտ. 20 ին , պիտի
վճարեմ Տ. Յովհաննու Պաղտասար-
եանց կամ իր հրամանին հինգ Հա-

ըիւր Քրանք որոյ փոխարէնն ընդու-
նած եմ՝ առձեռն պատրաստ դրամ
ի 10 առաջիկայ ամսոյս :

Տիրատուր Սահակեան
Աճուկն մետաքսի , փողոց ... թիւ ...

ՓՈՒԱՆՅՈՒԹԵԱՆ (ԱՆՏՈՍՄԱՆ)
ՕՐԻՆԱԿ


Վճարեցէք . Կաստանդնուսիոյ իս
Վաճառական Տ. Մաղաքոյ Սուրէն-
եան : Արժէքն ընդունած եմ՝ առձե-
ռն պատրաստ դրամ (կամ վաճա-
ռօք) :

ի : . . . 15 Յուլ . 1881 :

Մարտիրոս Շահումեան

Վ Ե Ր Ջ

Յ Ա Ն Կ



ՅԱՌԱՋԱԲԱՆ	Գ
ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ	9
1. ԳԻՏԵԼԻՔ. Մեկուկ տնուկը կամ ծննդեան տարեդարձը շնորհաւորելու համար	23
Տղայ մը իր հօրը	25
Պաշտպանի	26
Հօրեղբոր	27
Ընտանի բարեկամի	29
Հետը շատ ընտանութիւն շեղած բարեկամի մը	30
Պատասխան	31
Որդի մը հօրը ծննդեանը տարե- դարձին	32
Բարեկամ մը իր բարեկամին անոր ծննդեան օրը	34
2. ԳԻՏԵԼԻՔ. Նոր տարի շնոր- հաւորելու համար	35

Որդի մը հօրը	37
Բարեպաշտ անձի մը	40
Պատասխան	41
Նամակ առանց ընծայի	42
Ընտանի բարեկամի մը	44
Լինցած տարւոյն մէջ ճախորդու- թիւն քաշող բարեկամի մը	45
Պատասխան	47
Տարւոյն լիննալուն մօտ մեծարոյ մարդու մը	48
Պատասխան	49
Եղբօրորդի մը իր հօրեղբօրը	50
Մեծարոյ մարդու մը	52
Երկար ժամանակ առանց նամա- կի ձգուած մէկու մը	53
Պաշտպանի	54
Յ. ԳԻՏԵԼԻՔ. Թուղքք ուրախակ- ցութեան	56
Մեծ պաշտօնի մը հասնող մէկու մը	58
Նոյն նիւթին վրայ պաշտպանի մը	59
Ազգականի	60

Գատաստանի մէջ յաղթող գլխոս նուող բարեկամի մը	61
Պատասխան	62
Նոր ժմուսնացող մարդու մը	63
Պատասխան	64
Նոյն նիւթին վրայ ուրիշ բարե- կամի մը	65
Հարուստ մարդու մը հետ նոր ա- մուսնացած կին մը ուրիշ կըն- կան մը	66
Յնդրանիկ զաւկի ծննդեան համար	67
Զաւկի ծննդեան համար	68
Հօր մը իր որդւոյն ամուսնու- թեանը վրայ	69
Հօր մը իր աղջկանը ամուսնու- թեանը վրայ	71
Պատասխան	72
Ճանապարհորդութենէ ողջ առողջ ետ դարձողի մը	72
Նոր հիւանդութենէ ելլող մէկու մը	74
Պատասխան	75

Նոյն նիւթին վրայ ուրիշ բարեկամի մը	76
Պատասխան	77
4. ԳԻՏԵԼԻՔ. Թուղթք ցաւակցութեան	78
Բարեկամի մը որուն կնիկը մեռած է	79
Բարեկամի մը որուն քոյրը մեռած է	82
Հօր մը որուն որդին մեռած է	83
Բարեկամի մը որուն հայրը մեռած է	84
Կնկան մը որուն էրիկը մեռած է	85
Պատասխան	88
Հիւանդ մը մխրթարելու համար	89
Պատասխան	90
Չախորդութեան հանդիպող մեկուն	91
Պատասխան	92
5. ԳԻՏԵԼԻՔ. Թուղթք յանդիմանութեան	93
Երկար ժամանակ գիր շղրող բարեկամի	95


Պատասխան	97
Նոյն նիւթին վրայ ազգականի	98
Երկար ժամանակ հեռուն ըլլալէն ետքը եկած ժամանակն ալ քովերնիս շատ շկեցող բարեկամի մը	99
Երկար ժամանակ թուղթ չգրող հօր մը	100
Յանձնուած գործը եւս ձգող մեկուն	101
Անհող բարեկամի	103
Յ. ԳԻՏԵԼԻՔ. Թուղթք անձին անմեղադրութեան	104
Մէկուն սիրտն առնելու համար	106
Պատասխան	107
Պաշտպանի մը սրուն երկար ժամանակ թուղթ գրուած չէ	108
Հիւանդութեան պատճառաւ թուղթ գրել չկրցող մէկը իր զարեկամին	110

7. ԳԻՏԵԼԻՔ. Զանազան նիւթերու վրայ քղքեր գաւիկ մը իրեն ծնողացը ու մեծերուն գրուած 111
- Տղայ մը կաղանդի օրը իր ծնողացը կը գրէ 113
- Նոյն նիւթին վրայ ազգականի մը 114
- Նոյն նիւթին վրայ բարերարի կամ անոր տեղը բռնող ազգականի 115
- Տղայ մը հօրը անուան օրը 117
- Տունէն նոր զատուող աղջիկ մը իր մօրը 118
- Տղայ մը մօրը մահուանը վրայ իր հօրը 120
- Հեռու տեղ մը ուսման գացող տղայ մը իր ծնողներուն 122
- Խնամակալուի 123
- Տղայ մը հիւանդութենէ ելլելէն ետքը իր ծնողացը 124

- Տղայ մը հօրը հիւանդութեան
լուրը առնելով իր մօրը կը
գրէ 126
- Ուսման նոր սկսող տղայ մը իր
հօրը 127
8. ԳԻՏԵԼԻՔ. Թուրքք խնդրուա-
ծոց 129
- Գործք մը ձեռք ձգելու համար
սլաշտօնի վրայ եղող մարդու 130
- Երևելի իշխանի մը քով եղող բա-
րեկամէ մը շնորհք մը խընդ-
րելու համար 132
- Մէկէ մը ուրիշի մը համար շնորհք
մը խնդրելու 134
- Մէկուն վրայ տեղեկութիւն առ-
նելու համար քաղաքապետի մը 136
9. ԳԻՏԵԼԻՔ. Թուրքք յանձնա-
րարութեան 138
- Մէկէ մը ուրիշի մը համար գործք
մը խնդրելու 139
- Պատասխան 140

- Մէկու մը ճանապարհորդ մը
յանձնելու համար 141
- Անխնամ տղայ մը մէկուն խնա-
մոցը յանձնելու համար 142
- Սպասաւոր մը ուրիշ սպասաւոր
մը մէկուն կը յանձնէ 143
10. ԳԻՏԵԼԻՔ. Թուղթք շնորհա-
կայութեան 145
- Մէկու մը որ առանց խնդրելու
իր պաշտպանութիւնը շնոր-
հած է 146
- Մէկու մը որ մեր ուզածը կա-
տարած է 147
- Բարերարի մը որ յայտնուիլ չու-
զեր 148
- Բարեկամի մը մեր սւզածէն ա-
ւելի ստակ զրկելուն համար 150
- Կարգալու համար առնուած գիրք
մը ետ զրկուած ատենը 152
- Փոխ առնուած ստակ մը վճարե-
լու ատենը 155

Մենէ դաղանի մեզ պաշտպանող մարդու մը	155
11. ԳԻՏԵԼԻՔ. Օրինակք տոմ- սակցաց	158
Կարգալու համար փոխ առնուած գիրք մը եւս զրկելու ատեն	159
Ճաշի հրաւիրելու համար	159
Պատասխան	159
Ուրիշ պատասխան	160
Ուրիշ տոմսակ հրաւիրանոց	160
Պատասխան	161
Ուրիշ պատասխան	161
Հրաւիր ընտանեկան	161
Պատասխան	162
Ուրիշ տոմսակ	162
Ուրիշ տոմսակ	163
Պատասխան	163
Մէկը տուեր չգտնուած ժամա- նակը բարեկամ մը կուգայ տոմսակ կը գրէ	163
Խօսքը բռնել շիրցող մը ինքզինք կարդ արացնէ	164



İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM1379

255.07.02.01.06.00/

ՆՈՐԱՏՈՎ ԳՐԵԱՆՔ
Ի ԴՐԱՏԱՆ Ա. Յ. ՄԱՐԴԱՐԵԱՆԻ
Մերձան փողոց բիւ 57

Արուեստ նամակագրութեան	3
Յիսնակ առակի Վահան վարդապետ Տ. Մինասեանի Ա. Բ. հատոր	10
Վեցնագարեակ անկ. հայ. բանից Գ. Ռիքեարեան	4

Վերջիջեալ գրատունը կը գտնուի
նաեւ եկեղեցական, դպրոցական,
եւ քառերակիան, ամէն տեսակ
գրեանք :

ՀՐԱՄԱՆՈՒ ՄԷՅՐԻՅԷ

ՆՈՐԱՏԻՊ ԳՐԵԱՆՔ
 Ի ԴՐԱՏԱՆ Վ. Յ. ՄԱՐԴԱՐԵԱՆԻ
 Մերձան փողոց բիւ 57

Արուեստ նամակագրութեան	Յ
Յիսնակ առանկ Վահան վար- դարպետ Տ. Մինասեանի Ա. Բ. հատոր	10
Վեցհազարեակ տնկ. հայ. բա- ռից Գ. Յիրեարեան	4

Վերջիջեալ դրատունը կը գտնուի
 նաեւ եկեղեցական, դպրոցական,
 եւ քառեքական, ամեն տեսակ
 գրեանք :

ՀՐԱՄԱՆՈՒ ՄԵՆՐԻՅԷ